Բաց Հասարակության Հիմնադրամներ - Հայաստան

ԶԵԿՈՒՅՑ

«Սիրիահայերի ինտեգրման փորձառությունը Հայաստանում. խնդիրների հաղթահարման մեխանիզմները»

Երևան 2018

ԶԵԿՈՒՅՑ

«Սիրիահայերի ինտեգրման փորձառությունը Հայաստանում. խնդիրների հաղթահարման մեխանիզմները»

Հեղինակ՝ Լուսինե Տանաջյան

Երևան 2018

Սույն հետազոտությունը հնարավոր է դարձել Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստանի ամբողջական ֆինանսական օժանդակության շնորհիվ՝ «Քաղաքականության կրթաթոշակներ» ծրագրի շրջանակներում (դրամաշնորհ N 9876): Աշխատանքում արտահայտված մտքերը կարող են չհամընկնել Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստանի դիրքորոշումների ու տեսակետների հետ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ամփոփագիր.....4
Ներածություն.....5
Մեթոդաբանություն.....8
Հայաստան ներգաղթած սիրիահայերի դեպքը՝ ինտեգրման քաղաքականության միջազգային փորձի և մոտեցումների համատեքստում 10
Սիրիահայերի ինտեգրման խնդիրները և հաղթահարման փորձառությունը Հայաստանում 22
Եզրակացություն և քաղաքականության առաջարկություններ.....39
Օգտագործված գրականության և աղբյուրների ցանկ 48

Ամփոփագիր

«Սիրիահայերի ինտեգրման փորձառությունը Հայաստանում. խնդիրների հաղթահարման մեխանիզմները» վերտառությամբ քաղաքականության մշակման հետազոտությունը, որն իրականացվել է ԲՀՀ-Հայաստանի «Հանրային քաղաքականության կրթաթոշակներ» նախաձեռնության շրջանակներում 2018թ-ին, ուղղված էր Հայաստան տեղափոխված սիրիահայերի ինտեգրման ուղիների ուսումնասիրությանը, տարբեր ոլորտներում նրանց ունեցած խնդիրների բացահայտմանը: Հետազոտության արդյունքում նախանշվել են քաղաքականության հիմնական մարտահրավերները և մշակվել են առաջարկություններ:

Հետազոտության շրջանակներում առաջադրված խնդիրների բացահայտման և խորքային վերլուծության համար օգտագործվել են հետազոտության որակական մեթոդներ՝ ֆոկուս-խմբային հարցում, փորձագիտական հարցազրույց, դեպքի ուսումնասիրություն և երկրորդային վերլուծություն: Հետազոտության արդյունքները համադրվել են նաև նախկինում հեղինակի մասնակցությամբ իրականացված քանակական հետազոտության տվյալների հետ[1]:

Հետազոտության արդյունքների հիման վրա պատրաստվել է քաղաքականության փաստաթուղթ և համառոտագիր: Աշխատանքը բաղկացած է հետևյալ մասերից. ներածություն (որտեղ ներկայացված են հետազոտության հիմնախնդիրը, նպատակը, հետազոտական հարցերը), մեթոդաբանություն, տեսական հարցեր և իրականացված հետազոտությունների քննարկում, հետազոտության արդյունքների վերլուծություն, եզրակացություն և քաղաքականության առաջարկություններ, գրականության ցանկ և հավելվածներ:

[1] Էթնոսոցիոլոգիական հետազոտությունն իրականացվել է քանակական և որակական մեթոդներով՝ «Սիրիայից Հայաստան ներգաղթած հայերի աղապտացման և ինտեգրման խնդիրների լուծման ուղիները» ծրագրի շրջանակներում (ծրագրի ղեկավար Ռ. Կարապետյան, 2013-2015թթ.): Ծրագիրն իրականացվել է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի հետազոտությունների բաժնի կողմից: Հետազոտության արդյունքներն արտացոլված են հետևյալ աշխատության մեջ. Սիրիահայերը Հայաստանում. ինտեգրման ուղիները: Երևան, Գիտություն, 2015, 172 էջ:

Բանալի բառեր: *ներգաղթյալ, հայրենադարձություն, ինտեգրում, տնտեսական ակտիվություն, սոցիալ-մշակութային տարբերություններ:*

Ներածություն

Աշխարհում աճող միգրացիոն տեղաշարժերը մշտարթուն են պահում ներգաղթյալների ինտեգրման հիմնահարցը թե՛ քաղաքականության և թե՛ հետազոտությունների դաշտում: Առկա հայեցակարգերն ու փորձառությունները հնարավորություն են տալիս ուսումնասիրել միգրանտների ինտեգրման միջազգային մոտեցումները և ծրագրերը: Սակայն մշակութային ու կառուցվածքային (սոցիալ-տնտեսական) ադապտացման կամ ուծացման ընդհանրական ըմբռնման շրջանակներում ի հայտ են գալիս ներգաղթյալների ինտեգրման ազգային առանձնահատկություններ կամ մոդելներ: Հետազոտությունների վրա հիմնված՝ ինտեգրման արդյունավետ քաղաքականություն իրականացնելու համար անհրաժեշտ է նկատի առնել ազգային համատեքստը:

Հայաստան ներգաղթած սիրիահայերի ինտեգրման փորձը ուսումնասիրության և քաղաքականության մշակման հետաքրքիր դեպք է՝ առանձնահատուկ ազգային համատեքստով (թե՛ ընդունող երկրի, թե՛ ներգաղթած խմբի տեսանկյունից): Նույն էթնիկ խմբի ներգաղթի (անկախ դրդապատճառներից) և հայրենադարձության ըմբռնումը, հայկական սփյուռքի առկայությունը, ՀՀ միգրացիոն քաղաքականությունը և երկրի առարկայական իրավիճակը թելադրում են ինտեգրման քաղաքականության հատուկ մոտեցում, որը պետք է հիմնված լինի համապատասխան հետազոտությունների վրա:

Ներկայացվող ուսումնասիրությունը պարունակում է հիմնահարցի համակողմանի վերլուծություն, եզրակացություն և առաջարկություններ, ինչը կարող է դառնալ ինտեգրման քաղաքականության հետազոտական հենք:

Հիմնախնդիր: ՀՀ միգրացիոն քաղաքականության մեջ առավել մեծ տեղ են զբաղեցնում արտագաղթի վերաբերյալ պետական որոշումներն ու քաղաքականությունները՝ պայմանավորված արտագաղթի շարունակականությամբ: Սակայն միգրացիոն և սփյուռքի քաղաքականությունները հայտարարել են նաև ներգաղթին և հայրենադարձությանը նպաստող քաղաքականության որդեգրման

մասին[2]: Չնայած դրան, միգրացիոն քաղաքականության դիսկուրսը, հաճախ կենտրոնանալով Հայաստանից արտագաղթի մարտահրավերների վերլուծության վրա, իր շրջանակներից դուրս է թողնում ներգաղթի և դրա հնարավոր հետևանքների քննարկումը:

Հարկ է նշել, որ վերջին հարյուրամյակում Հայաստանում տեղի ունեցող տարբեր խմբերի ներհոսքը առաջ է բերել այդ խմբերի ընդունման, տեղավորման և ինտեգրման յուրահատուկ փորձի կուտակում[3]: Այդ խմբերից յուրաքանչյուրն իր ինտեգրումն անցել է տարաբնույթ ձևով՝ առանց պետության հատուկ քաղաքականության: Դրա մասին են փաստում այդ խմբերի հետագա միգրացիոն շարժունակության վերաբերյալ տվյալները: Ներգաղթի անցյալի փորձառությունը անհաժեշտ է դարձնում տարբեր խմբերին Հայաստանում ընդունման, տեղավորման և ինտեգրման ծրագրերի ստեղծման անհրաժեշտությունը:

2011թ.-ից սիրիական հակամարտության հետևանքով սիրիահայերի զանգվածային ներհոսքը Հայաստան ազդարարեց նոր խնդիրների և մարտահրավերների սկիզբը, ինչն առաջին հերթին պայմանավորված էր ՀՀ միգրացիոն քաղաքականության ծրագրերի թերացումներով և անհրաժեշտ գործնական քայլերի մշակվածության բացթողումներով: Պետք է նշել, որ ներգաղթյալների ինտեգրման գործընթացում կարևոր դերակատարում ունեն նաև այն խնդիրները, որոնք առկա են հայաստանցիների համար ևս, որոնց մասին իրազեկվածությունը ցածր է եղել ներգաղթյալների շրջանում: Վերջինս լուրջ խոչընդոտներ է առաջացրել ներգաղթյալների ինտեգրման համատեքստում: Պարզորոշ էր, սակայն, որ Հայաստանը գործնականորեն պատրաստ չէր ապահովել պայմաններ ներգաղթյալների կազմակերպված ներհոսքի և հետագա զարգացումների համար:

Առհասարակ, ներգաղթյալների ինտեգրման գործընթացի վերաբերյալ առավել լավ պատկերացում կազմելու և պետական քաղաքականության իրական

---

[2] Հակոբյան Ա. Սիրիահայերը Հայաստանում. հայրենադարձներ, թե՞ փախստականներ (իրավական, մշակութային ու սոցիալական ադապտացիայի հիմնախնդիրներ), Բաց Հասարակության Հիմնադրամներ_Հայաստան, քաղաքականության համառոտագիր, 2017:

[3]Կարապետյան Ռ. Սիրիահայերը Հայաստանում. ադապտացման և ինտեգրման խնդիրները, ուսումնասիրության նպատակները, մեթոդաբանությունը և հեռանկարները, Սիրիահայերը Հայաստանում. ինտեգրման ուղիները (պատ. խմբ.՝ Կարապետյան Ռ., Բարսեղյան Ս.) Երևան, Գիտություն, 2015, էջ 9:

ազդեցությունը տեսնելու նպատակով, անհրաժեշտ է ներգաղթյալների վերաբերյալ մշտադիտարկում և վերլուծություն՝ սկսած ներգաղթի պահից մինչև հաստատումը: Հայաստանում ներգաղթի խնդրի դիտարկման նման փորձառություն չկա: Իրականացվել են մի շարք ուսումնասիրություններ, որոնք հիմնականում վերաբերում են ներգաղթյալների առաջնային ինտեգրման խնդիրներին՝ չառանձնացնելով միգրացիոն տարբեր մտադրություններով խմբերին:

Հայաստան ներգաղթած սիրիահայերին կարելի է պայմանականորեն բաժանել երեք հիմնական խմբերի. Հայաստանում հաստատված, Սիրիա վերադարձած և երրորդ երկիր արտագաղթած: Մասնավորապես Հայաստանում հաստատված սիրիահայերի խումբն արդիական է դարձնում ինտեգրմանն ուղղված հատուկ քաղաքականության մշակման հարցը:

Սույն հետազոտության գլխավոր նպատակն է՝ մշակել ներգաղթյալների ինտեգրման քաղաքականության հայեցակարգային հիմքերը և ինտեգրման մեխանիզմները սիրիահայերի օրինակով: Հետազոտությունն ուղղված է Հայաստանում սիրիահայերի ինտեգրման խնդիրների բացահայտմանը սոցիալ-մշակութային և տնտեսական ոլորտներում, նրանց ինտեգրման վրա պետական քաղաքականության ծրագրերի ազեցության գնահատմանը:

Ելնելով հետազոտության նպատակից՝ շեշտադրվել են մի շարք հարցեր, որոնց պարզաբանումը թույլ կտա դուրս բերել սիրիահայերի՝ Հայաստանում ինտեգրման առանձնահատկությունները, տարբեր բնագավառներում նրանց ունեցած դժվարությունները և փորձը: Ըստ այդմ՝ առաջադրվել են հետևյալ խնդիրները.

1. Դուրս բերել ներգաղթած սիրիահայերի պատկերն ըստ սոցիալ-ժողովրդագրական ցուցիչների,
2. Հավաքագրել Հայաստանում սիրիահայերի ընդունմանն ու ինտեգրմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների ամբողջական ցանկը, պարզել դրանց ազդեցությունը նրանց հետագա մտադրությունների վրա.
3. Բացահայտել ներգաղթյալների ինտեգրման խնդիրները և դրանց հաղթահարումը տարբեր ոլորտներում, մասնավորապես՝
   3.1 սոցիալական ներգրավվածությունն ու սոցիալական կապերի գործառնությունը Հայաստանում,

3.2 մշակութային ոլորտում ունեցած խնդիրները (հատկապես կրթական համակարգի հետ կապված),

3.3 տնտեսական ակտիվության/գործարարության առանձնահատկությունները Հայաստանում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հաշվի առնելով հետազոտության օբյեկտի առանձնահատկությունը՝ նպատակահարմար է եղել հետազոտությունն իրականացնել մեթոդների և գործիքակազմի համալիր կիրառմամբ:

Երկրորդային վերլուծությունը (desk research) հնարավորություն է տվել ծանոթանալ ներգաղթած սիրիահայերի մասին առկա նյութերին և տվյալներին, կատարել դրանց նախնական վերլուծություն և տեղեկատվական օգտակարության գնահատում: Ուսումնասիրվել են Սփյուռքի նախարարությունում և այլ մարմիններում առկա վիճակագրական տվյալները և տեղեկությունները սիրիահայերի տարբեր խմբերի վերաբերյալ, առկա հետազոտությունները և այլն: Վերջինս հնարավորություն է տվել դուրս բերել քանակական տվյալներ և մինչև այժմ իրականացված հետազոտությունների վրա մշակված ռազմավարությունների բնույթը:

Ֆոկուս-խմբային հարցումներն իրականացվել են սիրիահայերի տարբեր խմբերի շրջանում (5 խումբ): Տվյալների հիման վրա դուրս են բերվել սիրիահայերի մոտ առաջացած խնդիրների համալիրը՝ ներգաղթի փուլից մինչև հաստատումը: Այս մեթոդով նաև հնարավոր է եղել բացահայտել և վերլուծել տարբեր ոլորտներում թիրախային խմբի ունեցած դժվարությունների խորքային կողմերը: Առանձնացվել են տարբեր խմբեր՝ մանկավարժներ, տնտեսագետներ, ուսանողներ և այլն, ինչպես նաև կարևոր է համարվել հասարակական կամ այլ կազմակերպություններում ներգրավված և չներգրավված սիրիահայերի խմբերի հետ ֆոկուս-խմբերի անցկացումը:

Փորձագիտական հարցումները (8 փորձագետ) թույլ են տվել դուրս բերել տարբեր ոլորտի մասնագետների փորձագիտական կարծիքը Հայաստանում սիրիահայերի տեղավորման և ինտեգրման փորձի հետ կապված գործողությունների

վերաբերյալ, իրականացված քայլերի դրական և բացասական կողմերը, օրենսդրական նախաձեռնությունների և քաղաքականության օգտակարությունն ինտեգրման հարցում: Փորձագետներ են հանդիսացել պետական օղակի ներկայացուցիչները, հասարակական կազմակերպությունների ղեկավարները, ոլորտից քաջատեղյակ մասնագետները, ակադեմիական հետազոտողները:

Դեպքի ուսումնասիրության (case study) շրջանակներում ուսումնասիրվել են սիրիահայերի տիպային դեպքեր: Առանձին հետաքրքրություն են ներկայացնում Հայաստանում հաստատված այն հաջողված դեպքերը, որոնք առնչվել են ձեռնարկատիրության ոլորտին: Դիտարկվել են նաև Սիրիա վերդարձած և այլ երկրներ մեկնած սիրիահայերի դեպքերը:

ՀԱՅԱՍՏԱՆ ՆԵՐԳԱՂԹԱԾ[4] ՍԻՐԻԱՀԱՅԵՐԻ ԴԵՊՔԸ՝ ԻՆՏԵԳՐՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԻ և ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Հայաստանում սիրիահայերի ինտեգրման խնդիրների հաղթահարման, նրանց հետ արդյունավետ աշխատանքի մեխանիզմների դուրսբերման և քաղաքականության մշակման համար առաջին հերթին անհրաժեշտ է անդրադառնալ միջազգային փորձին, ապա՝ հիմնահարցը դիտարկել այդ համատեքստում:

Նախ անդրադառնանք մի քանի հայեցակարգերի, որոնք կօգնեն սահմանել խնդիրների հաղթահարման հնարավոր ուղղությունները և գտնել դրանց հասնելու հայտանիշները:

Այսպես, գրականության մեջ միգրանտների ինտեգրումը դիտարկվում է որպես ադապտացման մաս, վերջնական փուլ[5]: Որպես կանոն, տեսական և հետազոտական շրջանակներում ընդունված է համարել, որ ներգաղթյալներն էականորեն տարբերվում են ընդունող հասարակությունից իրենց կրոնով, լեզվով, մշակութային ավանդույթներով (օրինակ, թուրք ներգաղթյալները Գերմանիայում, արաբները Ֆրանսիայում և այլն): Ելնելով այս դրույթից՝ ինտեգրումն ինքնին բավականին երկարատև և բազմաշերտ երևույթ է, որը պետք է հաղթահարի ադապտացումն իր բոլոր մակարդակներով և ուղղություններով: Ահա այս նպատակով տեսաբաններն առաջարկում են ինտեգրման գործընթացը դիտարկել մի քանի մակարդակներով՝ իրավական, քաղաքական, սոցիալական, տնտեսական, մշակութային, կրոնական և այլն: Այսպիսի տարանջատող մոտեցումը, թերևս, կարելի է համարել արհեստական և ոչ լիարժեք, որովհետև ինտեգրման գործընթացում այս բաղադրիչներն առավել հաճախ հանդես են գալիս համակցված ձևով:

Ըստ ընդհանուր դիտարկման՝ ներգաղթյալների ինտեգրումը երկարատև գործընթաց է և ունի հետևյալ կողմերը.

---

[4] Ներգաղթյալ եզրույթը սույն հետազոտության մեջ օգտագործվում է լայն իմաստով: Այն տարածվում է Սիրիայից հայաստան տեղափոխված բոլոր հայերի վրա՝ անկախ իրավական կարգավիճակից և քաղաքացիությունից:

[5] Южанин М. А., о социокультурной адаптации в иноэтнической среде: концептуальные подходы к анализу, Социологические исследования, № 5, 2007, с. 76.
Рязанцев С.В., Трудовая миграция в странах СНГ и Балтии: тенденции, последствия, регулирование. М.: Формула права, 2007. с. 22. Berry J. W., Sam D.L. Acculturation and adaptation. Boston, 1997.

1) Ներգաղթյալների ինտեգրումը իրենից ներկայացնում է փոխգործակցություն ընդունող հասարակության և ներգաղթյալների միջև. ներգաղթյալների տարբեր խմբեր (տարիքային, մասնագիտական, սեռային և այլն) ունեն ինտեգրման տարբեր աստիճանի կարիք:
2) Պետությունը պետք է մշակի ինտեգրման քաղաքականության սահմաններ և այդ սահմաններին համապատասխան ենթակառուցվածքներ, որոնք կապահովեն ներգաղթյալների ինտեգրման պայմանները:
3) Ինտեգրման գործընթացում պետք է ներգրավված լինեն քաղաքացիական հասարակության տարբեր ինստիտուտներ, որոնք կներկայացնեն ներգաղթյալների շահերը և պահանջմունքները:

Բացի ինտեգրման ուղղությունների և փուլերի քննարկումից, կարևոր է անդրադառնալ նաև այդ գործընթացի բուն մասնակիցներին: Այստեղ ընդունելի է այն մոտեցումը, որում ինտեգրումը դիտարկվում է որպես երկկողմանի գործընթաց: Դրանում ներգրավված կողմերը՝ ներգաղթյալները և ընդունող երկրի քաղաքացիները, ունեն հավասար մասնակցություն: Կախված նրանից, թե ներգաղթյալները որքան հաջող և սահուն կներառվեն ընդունող հասարակություն, այդքան ավելի հարթ կընթանա նաև ընդունող երկրի սոցիալական, տնտեսական, մշակութային և քաղաքական կյանքը: Արդյունավետ ինտեգրում իրականացնելու համար պետությունները մշակում են հատուկ ռազմավարություն/քաղաքականություն[6]:

Տարբեր երկրներում միգրացիայի կարգավորման փորձն ընթանում է երկու՝ ներգաղթյալների ձուլման (օրինակ՝ Ֆրանսիա, Գերմանիա, ԱՄՆ, Շվեյցարիա) և մշակույթների համակեցության (օրինակ՝ Մեծ Բրիտանիա, Կանադա, Ավստրալիա, Շվեդիա, Բելգիա, Դանիա, Նիդերլանդներ, Ֆինլանդիա) եղանակով:

Առաջին դեպքում ընդունող երկիրը վարում է տեղացիների և ներգաղթյալների միջև մշակութային տարբերություններն առավելագույնս մեղմելու, տարալուծելու քաղաքականություն: Որպես կանոն, այս երկրներում ներգաղթյալներին «ցրում» են երկրի ողջ տարածքով, հարկադրում սովորել երկրի լեզուն, պատմությունը, երբեմն

[6] Rinus Penninx , Integration Of Migrants: Economic, Social, Cultural and Political Dimensions, Edited by Miroslav Macura, Alphonse L. MacDonald and Werner Haug, The New Demographic Regime Population Challenges and Policy Responses, New York and Geneva, 2005, p. 137-150.

նույնիսկ արգելում են դրսևորել ազգային պատկանելությունը (օրինակ՝ կրել ազգային հագուստ) և այլն:

Երկրորդ դեպքում, ընդհակառակը, խրախուսվում է մշակութային բազմազանությունը: Այս պարագայում կարևորվում է ոչ թե այդ քաղաքականությունների մոտեցումները կամ վերջնարդյունքը, այլ դրանց իրականացման մեխանիզմները: Թվարկված բոլոր երկրների կառավարությունները ոչ միայն հայտարարում են ներգաղթյալների քաղաքականության մոդելը, այլև ձևավորում են համապատասխան ենթակառուցվածք այն իրականացնելու համար. օրենսդրական հիմք, ներգաղթի հոսքը և հետագա ինտեգրման գործընթացները կարգավորող ինստիտուտներ, կենտրոններ և այլն:

Ներկայացնենք ինտեգրման քաղաքականության մի քանի ընդունված ռազմավարություններ, որոնք կիրառվում են միջազգային փորձում:

- Ներառող և մեկուսացնող (inclusiv and exclusive[7])

Առաջինը վերաբերում է ներգաղթյալների լիակատար ներառմանը, տարալուծմանը հասարակության մեջ: Հատկանշական է, որ ներառող վարքը կարող է լինել ինչպես ինքնաբուխ, այնպես էլ պետական քաղաքականության հետևանք: Վերջին դեպքը հետազոտողների շրջանակում ընդունված է անվանել քաղաքականությամբ պարտադրված կամ հարկադիր ներառում, երբեմն նույնիսկ ձուլում:

Երկրորդն ուղղված է ներգաղթյալների կենտրոնացմանն ու առանձնացմանը, ինչպես սոցիալական, այնպես էլ լոկալ առումով՝ ինքնության պահպանման և վերարտադրման համար անհրաժեշտ պայմաններ ապահովելու նպատակով:

- Ուղղահայաց և հորիզոնական (vertical and horizontal)

Այս պարագայում կարևորվում է հասարակության մեջ ներգաղթյալների ինտեգրման սկզբունքն ըստ ներառման ուղղության:

Որպես օրինակ, ԱՄՆ-ում և Կանադայում ներգաղթյալների ներառումը հասարակության մեջ իրականացվում է ներքևից վերև սկզբունքով: Հաշվի են առնվում, թե ինչպես է տեղի ունենում այդ ներառումը սոցիալական փոխազդեցության մակարդակում: Մասնավորապես, առկա է արդյո՞ք

[7] R Miles, D Thränhardt, Migration and European Integration: The Dynamics of Inclusion and Exclusion, 1995, p. 209.

խտրականություն, ինչպե՞ս է իրականանում զբաղվածության գործընթացը, խառն ամուսնությունների, բնակավայրի ընտրության հարցը և այլն:

Եվրոպական հասարակություններում հիմնականում կիրառվում է ներգաղթյալների ինտեգրման վերևից ներքև սկզբունքը: Այստեղ ինտեգրումը դիտարկվում է որպես քաղաքական-վարչական հարց, համապատասխանաբար, այն իրականացվում է պետության քաղաքականության կամ հատուկ ծրագրերի համաձայն[8]:

- Դինամիկ և ստատիկ (dynamic or static)

Դինամիկ ռազմավարությունը ենթադրում է մշտական փոփոխության իրականացում ինտեգրման քաղաքականության մեջ՝ նոր դեպքերին համահունչ: Այն, ի տարբերություն ստատիկ, քարացած քաղաքականության, թույլ է տալիս կիրառել ավելի ճկուն մեխանիզմներ ներգաղթյալների արդյունավետ ինտեգրումն ապահովելու նպատակով:

- Մշտահոս կամ իրադարձային (rouged or eventual)

Ներգաղթի յուրաքանչյուր հոսք ենթադրում է քաղաքականության մշակում կամ առնվազն դրա թարմացում, քանի որ այն այս կամ այն կերպ անդրադառնալու է ինչպես ներգաղթող նոր խմբի, այնպես էլ արդեն ինտեգրման որոշակի փուլում գտնվող խմբի և, անշուշտ, ընդունող հասարակության վրա: Այս ամենը հաշվի առնելով՝ յուրաքանչյուր պետություն պետք է մշակի ներգաղթյալների կայուն քաղաքականություն, որը կապահովագրի իր հասարակության և հնարավոր ներգաղթյալների սահուն սոցիալական կյանքը: Մշտահոս ռազմավարությունը ենթադրում է հստակ, համապարփակ քաղաքականություն, որի միջոցով հնարավոր կլինի կարգավորել ներգաղթյալների արդյունավետ ինտեգրումը՝ չնայած ներգաղթի հաճախականությանն ու ներհոսքի շարունակական ալիքներին:

Իսկ իրադարձային ռազմավարությունը ներգաղթի նոր հոսքին տալիս է տեղային արձագանք և մշակում նախադեպային հատուկ քաղաքականություն յուրաքանչյուր դեպքի համար:

---

[8] Favell A. Integration Policy and Integration Research in Europe: a Review and Critique // Citizenship Today: Global Perspectives and Practices /T.A. Aleinikoff, D. Klusmeyer (eds.). Washington, D.C. : Brookings Institution / Carnegie Endowment for International Peace, 2001. P. 349–399.

Հասկանալու համար Հայաստանում սիրիահայերի ինտեգրման իրական քաղաքականությունը և միջազգային փորձի համատեքստում այդ դեպքի դիտարկումը, հարկ է ուսումնասիրել Հայաստան ներգաղթած սիրիահայերի հիմնահարցին ուղղված ծրագրերի և միջոցառումների համալիրը:

ՀՀ-ում սիրիահայերի նկատմամբ իրականացված ծրագրեր: ՀՀ-ում սիրիահայերի նկատմամբ պետական քաղաքականությունը կրում է իրադարձային բնույթ: Այն ձևավորվել է պետության առջև ծառացած խնդրի լուծման հետևանքով: Սիրիական հակամարտության հետևանքով Հայաստան տեղափոխված սիրիահայերի նկատմամբ պետական քաղաքականությունը դեռևս 2012թ.-ից դարձել է անհրաժեշտություն:

Անդրադառնալով Սիրիայից փախստականների ճգնաժամի հարցին՝ 2015թ.-ին բրիտանական «The Economist» պարբերականը դասակարգել է երկրները՝ ըստ Սիրիայից ընդունած փախստականների թվի: Ըստ այդ տվյալների՝ Սիրիայից ընդունած փախստականների թվով Հայաստանը, որպես տարածաշրջանային ընդունող երկիր, իր բնակչության թվի համեմատ Եվրոպայում երրորդ երկիրն է[9]:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տեղահանվածներն ազգությամբ հայեր են և կազմում են սփյուռքի մաս, սիրիահայերի հետ տարվող աշխատանքները համակարգում է ՀՀ սփյուռքի նախարարությունը: Նախարարությունում առկա տեղեկատվության համաձայն՝ 2018թ. դրությամբ Հայաստանում բնակվում է շուրջ 22.000 սիրիահայ[10], որոնց մի մասն անընդհատ գտնվում է շարժման մեջ[11]:

Համաձայն Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ) կողմից իրականացվող «Մասնավոր հատվածի զարգացում Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում իրականացված հետազոտության տվյալների՝ հարցմանը մասնակցած 150 սիրիահայ ընտանիքները Հայաստան են տեղափոխվել 2011թ. ապրիլից 2016թ.-ի հոկտեմբերն ընկած ժամանակահատվածում: Նրանց մոտ

[9] https://www.economist.com/graphic-detail/2015/09/10/where-syrians-find-their-refuge/Where Syrians find their refuge

[10] Ներկայումս Հայաստանում բնակվող Սիրիայից տեղահանված անձանց թվաքանակի վերաբերյալ, սակայն, ճշգրիտ տվյալներ չկան

[11] http://www.mindiaspora.am/am/petakan_qaxaqakanutyun

40%-ը Հայաստան է եկել 2011-2013 թվականներին (համապատասխանաբար՝ 4%, 26% և 11%), իսկ 60%-ը՝ 2014-2016թթ.[12]:

2012թ.-ից ՀՀ սփյուռքի նախարարությունում գործում է սիրիահայերի հիմնահարցերով զբաղվող աշխատանքային խումբ, արագ արձագանքման խումբ, թեժ գիծ: ՀՀ վարչապետի 2013 թվականի հունվարի 14-ի N9-Ա որոշմամբ՝ ստեղծվել և իր գործունեությունն է շարունակում Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովը: Գործում են ոլորտային չորս աշխատանքային խմբեր, որոնք իրենց գործունեությունն են ծավալում սիրիահայերի խնդիրների ուղղությամբ՝ բնակարանային, աշխատանքային, առողջական և կրթական: Ըստ ՀՀ Սփյուռքի նախարարության տեղեկությունների՝ 2012թ. ՀՀ քաղաքացիություն է ստացել 5026, 2013թ.՝ 4150, 2014թ.՝ 1531 սիրիահայ: Ընդհանուր առմամբ, 2012-2014թթ. ՀՀ քաղաքացիություն է ստացել 10707 սիրիահայ: 2013-2014թթ. ընթացքում 220 սիրիահայ ձեռք է բերել ժամանակավոր (1տարի), 155-ը՝ մշտական (5 տարի) և 390-ը՝ հատուկ կարգավիճակ (10 տարի)[13]: Այս համատեքստում մի շարք հետազոտողներ իրենց առջև խնդիր են դրել ուսումնասիրել սիրիահայերի իրավական կարգավիճակը, փաստաթղթերի հետ կապված մի շարք խնդիրներ և այլն:

Այս և նմանատիպ այլ հարցեր են քննարկվում Ա. Հակոբյանի՝ «Սիրիահայերը Հայաստանում. հայրենադարձներ, թե՞ փախստականներ (իրավական, մշակութային ու սոցիալական ադապտացիայի հիմնախնդիրներ)» հետազոտության մեջ: Մեկ այլ լայնածավալ հետազոտություն է «Հայրենադարձության փորձը ու ինտեգրումը Հայաստանում. խոչընդոտները և հնարավորությունները» աշխատությունը (հեղինակներ՝ Վ. Մարաշլյան, Ն. Գալստյան, Ի. Գրիգորյան): Մյուս կարևոր ասպեկտը, որին անդրադարձել են հետազոտողները, սիրիահայերի տնտեսական ինտեգրումն է Հայաստանում: Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ) կողմից իրականացվող «Մասնավոր հատվածի զարգացում Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում իրականացված «Սիրիացի

[12]http://www.edrc.am/images/Useful_Publications/aer_2016_eng.pdf/ Հայաստանիտնտեսական զեկույց 2016թ., սիրիահայերի տնտեսական ինտեգրումը հայաստանում

[13]Սիրիահայերը Հայաստանում. հայրենադարձներ, թե՞ փախստականներ (իրավական, մշակութային ու սոցիալական ադապտացիայի հիմնախնդիրներ), Բաց Հասարակության Հիմնադրամներ_Հայաստան, 2017:

փախստականների տնտեսական ինտեգրումը Հայաստանում հետազոտությունը (2015 – 17թթ.)»[14]: Վերջինս շոշափում է Հայաստանում սիրիահայերի տնտեսական ակտիվությունն ու ծավալած գործունեության առանձնահատկությունները: Հետազոտող Գ. Հակոբյանի՝ «Հայաստանում բնակվող սիրիահայ ընտանիքների էթնոմշակութային առանձնահատկությունները» գիտական աշխատանքը, որը լայնածավալ հետազոտության մաս է կազմում, համեմատական ուսումնասիրության միջոցով ներկայացնում է սիրիահայերի ընտանեկան ավանդույթների և արժեքների յուրահատկությունները (Արդի հայ ընտանիքը փոխակերպվող հասարակությունում, հեղինակներ՝ Մ. Գալստյան, Ռ. Օհանջանյան, Թ. Զաքարյան, Գ. Հակոբյան): ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի հետազոտությունների բաժնի կողմից հրատարակված «Սիրիահայերը Հայաստանում. ինտեգրման ուղիներ» աշխատությունը բովանդակում է սիրիահայերի ադապտացման խնդիրների, մասնագիտական և սոցիալական ներգրավվածության, ինքնակազմակերպման հարցերը, ինչպես նաև սիրիահայերի ներգաղթի վերաբերյալ մամուլի արձագանքները (պատ. խմբ.՝ Ռ. Կարապետյան, Ս. Բարսեղյան):

Այս և այլ կատարված հետազոտություններն անդրադառնում են մի շարք կարևոր հարցերի, սակայն, ըստ էության, քաղաքականության մշակման հետազոտություններն առավել քան արդիական են խնդրի կարգավորման համար:

ՀՀ-ում սիրիահայերի նկատմամբ պետական քաղաքականության ներքո մշակվել են մի շարք ծրագրեր տարբեր մակարդակներում՝ պետական գերատեսչությունների, միջազգային կառույցների և հասարակական կազմակերպությունների: Այդուհանդերձ, պետք է արձանագրել մի փաստ, որ ՀՀ-ը չունի ներգաղթյալների ինտեգրման ընդհանրական մոտեցում՝ որպես պետական քաղաքականության մաս: Իրականացվող ծրագրերը սկսած 2013թ.-ից ներառել են մի շարք ուղղություններ և իրականացվել տարբեր կազմակերպությունների կողմից (տե՛ս, աղյուսակ 1): Պետք է նկատել, որ բոլոր ծրագրերը որդեգրել են գրեթե նույն ուղղվածությունը՝ միտված առաջնային կարիքների բավարարմանը: Ծրագրերից որոշների աջակցման շահառուները ոչ միայն սիրիական հակամարության

[14]https://eriwan.diplo.de/blob/1272548/6248f493038de3b6b53048e2776cd5b0/ez-broschuere-data.pdf/ Գերմանիայի Դաշնային Հանրապետության ծրագրերը Հայաստանում

հետևանքով Հայաստան տեղափոխված սիրիահայերն են, այլ առհասարակ փախստականներ և Հայաստանում ապաստան հայցողներ[15]:

Աղյուսակ 1. Սիրիահայերի աջակցության մի շարք ծրագրեր[16]

Կառույց, կազմակերպություն	Տեսակ	Աջակցության ուղղություն
ՀՀ սփյուռքի նախարարություն	Պետական	Սիրիահայերի հրատապ օգնություն, ինտեգրման խնդիրների լուծում:
ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն, Միգրացիոն պետական ծառայություն	Պետական	Հումանիտար (փաստաթղթային և այլ առաջնային հարցեր) Սոցիալ-մշակութային ինտեգրում (կարիքների գնահատում, ուղղորդում, տարբեր դասընթացերի կազմակերպում, ժամանակավոր ապաստանի տրամադրում)
ՀՀ-ում ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի ներկայացուցչություն UNHCR	Միջազգային	Պաշտպանություն, ապաստան հայցողների առաջնային կարիքների և հիմնական ծառայությունների ապահովում Երկարատև լուծումների խթանում, ինտեգրման և ինքնաապահովման ամրապնդում Ապաքաղաքացիության կանխարգելում և նվազեցում
Ամերիկյան Իրավաբանների ընկերակցություն ABA ROLI	Միջազգային	Իրավական և սոցիալ-տնտեսական ինտեգրում (իրավաբանական խորհրդակցություն, իրավագիտակցության մակարդակի բարձրացում և այլն) 2016-18թթ.
«Սիրիահայերի միություն» ՀԿ	Հասարակական	Սիրիահայերի տնտեսական ինտեգրում, ՀՀ-ում հայրենադարձության խթանում (սիրիահայերի ուղղորդում հայաստանյան բիզնես միջավայրում, այլ նախաձեռնություններ՝ ցուցահանդես վաճառքներ, ազգային արհեստների ցուցադրում և հանրայնացում և այլն), 2018թ.
Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն	Հասարակական	Սոցիալ-տնտեսական, մշակութային ինտեգրում, հումանիտար օգնություն
«Հալեպ հայրենակցական	Հասարակական	Սոցիալ-տնտեսական ինտեգրում (արտագաղթի կանխում, սիրիահայերի՝ Հայաստանում

[15] http://olp.advocates.am/pluginfile.php/1397/mod_resource/content/ Հայաստանում տեղահանված անձանց աջակցման ծառայությունների տեղեկատվական թերթիկ

[16] http://olp.advocates.am/pluginfile.php/1397/mod_resource/content/ Հայաստանում տեղահանված անձանց աջակցման ծառայությունների տեղեկատվական թերթիկ (աղյուսակում տեղ գտած ծրագրերը լիարժեք չեն, սակայն ծառայում են որպես տեղեկատվություն իրականացված ծրագրերի ուղղությունների մասին)

բարեսիրական ընկերություն» ՀԿ		հաստատմանն աջակցություն), հունամտիտար օգնություն, սոցիալ-հոգեբանական աջակցություն
«Վերադարձ Հայաստան» հիմնադրամ		Սոցիալ-տնտեսական ինտեգրում՝ կողմնորոշման հանդիպումներ տարբեր բնագավառներում, (մասնավորապես՝ աշխատանքային զբաղվածության աջակցություն) Կարիքների գնահատում և օգնություն Քաղաքացիության, կացության աջակցություն Բիզնես տեղեկատվություն
Վորլդ Վիժն միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ	Միջազգային	Սոցիալ-տնտեսական ինտեգրում (աշխատանքի տեղավորում, փոքր բիզնեսի խթանում, աշխատանք երիտասարդների հետ), 2017-18թթ.
ՀՀ փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակ	Հասարակական	Անվճար իրավաբանական խորհրդատվություն
ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ	Պետական	Իրավական աջակցություն
«ՀՀ փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամ	Պետական	Սոցիալ-տնտեսական ինտեգրում (ձեռնարկատիրական գործունեության խթանում)
«Առաքելություն Հայաստան» ՀԿ	Հասարակական	Հումանիտար, իրավական և սոցիալ-տնտեսական ինտեգրում (սոցիալական, իրավական և բժշկական աջակցություն, կրթական/մասնագիտական աջակցություն, հոգեբանական աջակցություն)
Կազա շվեյցարական մարդասիրական հիմնադրամ	Միջազգային	Սոցիալ-տնտեսական ինտեգրում, մշակութային ինտեգրում 2018թ.
Հայկական կարիտաս բարեսիրական ընկերություն	Միջազգային	Իրավական, սոցիալ-տնտեսական ինտեգրում, մարդու իրավունքների պաշտպանություն, 2017-2019թթ.
Հայկական կարմիր խաչ ընկերություն	Միջազգային	Սոցիալ-տնտեսական ինտեգրում, հումանիտար օգնություն
Հայ օգնության ֆոնդի Հայաստանյան մասնաճյուղ	Միջազգային	Սոցիալ-տնտեսական, մշակութային ինտեգրում, հումանիտար օգնություն
Հայ Բարեգործական Ընդհանուր Միություն	Միջազգային/ հասարակական	Իրավական, սոցիալ-տնտեսական ինտեգրում (ուսանողների, վարձավճարների օժանդակություն, գյուղատնտեսական

		աջակցություն) մշակութային ինտեգրում, հումանիտար օգնություն, 2013թ.
Ջինիշյան հիշատակի հիմնադրամ	Հասարակական	Սոցիալ-տնտեսական ինտեգրում (մասնավորապես՝ ձեռնարկատիրական գործունեության խթանում)
ՍՕՍ մանկական գյուղեր	Հասարակական	Հումանիտար աջակցություն
Կանանց աջակցան կենտրոն	Հասարակական կազմակերպություն	Իրավական, սոցիալ-տնտեսական ինտեգրում, հումանիտար օժանդակություն, 2018թ.
Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն (GIZ)	Միջազգային	Սիրիացի փախստականների տնտեսական ինտեգրումը Հայաստանում, սիրիահայ գործարարներին և աշխատանք փնտրողներին աջակցություն, 2015- 2018թ

Ինչպես երևում է աղյուսակում ներկայացված տվյալներից, նշված ծրագրերը հիմնականում կետրոնացած են սոցիալ-տնտեսական ինտեգրման վրա: Ի հավելումն, փորձագիտական հարցազրույցներից պարզ է դառնում, որ իրականացված ծրագրերի վերաբերյալ տարբեր շրջանակների փորձագետների գնահատականները տարբերվում են: Այսպես, պետական հատվածի ընդհանրական փորձագիտական գնահատմամբ խնդրի նկատմամբ ցուցաբերվել է ինստիտուցիոնալ մոտեցում: Սիրիահայերի խնդիրներով զբաղվել են բոլոր պետական մարմինները, որոնք որոշակի առնչություն կարող էին ունենալ սիրիահայերի հասարակական ինտեգրման ոլորտներում: Որոշումները և օրենքները ընդունվել են սիրիահայերի հարցերով զբաղվող հանձնաժողովի քննարկումների և նախաձեռնությունների շնորհիվ:

Սակայն փորձագետների տվյալների համաձայն, իրականացված ծրագրերի վերաբերյալ սիրիահայերի գնահատականները տարբերվում են: Ըստ փորձագետների՝ առանձին ծրագրերի մակարդակով արդյունավետության գնահատում չեն իրականացրել, գնահատել են Սփյուռքի նախարարության աշխատանքային խմբին, սիրիահայերի խնդիրները համակարգող խորհրդին: Առավելապես զոհունակություն են հայտնել Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոնից: Շատ բարձր են գնահատել հատկապես միջազգային

կառույցների կողմից իրականացվող ծրագրերը, մասնավորապես, Կարմիր Խաչի աշխատանքները:

Այնուհանդերձ, ծրագրերը հիմնականում միտված են եղել առաջնային կարիքների բավարարմանը և կրել են կարճաժամկետ բնույթ, որոնք միտված են եղել խնդրի այդրոպեական լուծմանը: Ծրագրերից շատ քչերն են, որ նպաստել են Հայաստանում սիրիահայերի մշտական հաստատմանը և նրանց արտագաղթի կանխմանը:

Սիրիահայերի ներգաղթը՝ որպես հայրենադարձություն[17]: Սիրիահայերի ներգաղթը Հայաստան չի ընկալվում և գնահատվում միանշանակորեն: Այն ներկայացվում է տարբեր դիտանկյուններով՝ գիտական հանրության, ներգաղթյաների և ընդունող երկրի կողմից, ինչպես նաև, սփյուռքի և միջազգային հանրության կողմից:

Հայաստանյան և սփյուռքյան դիսկուրսներում այն ավելի շատ դիտարկվում է որպես հայրենադարձություն՝ պայմանավորված Հայաստանի ներգաղթի պատմությամբ, սփյուռքի առկայությամբ և էթնիկ պատկանելության հիման վրա ներգաղթի քաղաքականությամբ, ինչպես նաև հայրենադարձության քաղաքականության մասին պարբերաբար այժմեականացվող քննարկումներով:

Վերջին հարյուրամյակի ընթացքում Հայաստան ներգաղթած հայերի տարբեր խմբերը թելադրեցին իրենց փորձի ուսումնասիրության կարևորությունը և անհրաժեշտությունը: Այդ ընթացքում անընդհատ տեղի է ունեցել հայերի տարբեր զանգվածների աստիճանական կամ միաժամանակյա ներգաղթ՝ հայրենադարձություն[18]: Ըստ հետազոտությունների տվյալների՝ հայրենադարձությունը կարելի է բաժանել մի քանի շրջանների: Հայրենադարձության առաջին շրջանն ընդգրկում է 1914-1920թթ., երբ Արևմտյան Հայաստանից և Կարս նահանգից փախստականների հսկայական զանգված ներգաղթեց, հաջորդ փուլերն

---

[17] Միգրացիայի միջազգային կազմակերպությունը սահմանել է այն որպես միգրանտի ներկայիս բնակության վայրից վերադարձ բնակության նախորդ երկիր կամ միգրանտի հայրենիք (International Organization for Migration (IOM) (2010). Enhancing the Role of Return Migration in Fostering Development, No 15, International Dialogue on Migration, Migration Policy and Research, Geneva): Աշխատության շրջանակներում հայրենադարձությունը դիտարկվում է որպես էթնիկ հայերի վերադարձ, բնակեցում ու իրավունքների վերականգնում Հայաստանում:

[18] Կարապետյան Ռ. Սիրիահայերը Հայաստանում. ադապտացման և ինտեգրման խնդիրները, ուսումնասիրության նպատակները, մեթոդաբանությունը և հեռանկարները, Սիրիահայերը Հայաստանում. ինտեգրման ուղիները (պատ. խմբ.՝ Կարապետյան Ռ., Բարսեղյան Ս.), Երևան, Գիտություն 2015, էջ 7:

էին՝ 1920-1932թթ., 1946-1949թթ.[19] և 1962-1980թթ. հայրենադարձների կազմակերպված խմբերի ներգաղթը[20], 1989-1990թթ. Ադրբեջանից բռնագաղթածների հոսքը, 1990-2000թթ. Իրաքից[21], Սիրիայից, ինչպես նաև ոչ մեծ խմբեր ներգաղթեցին Լիբանանից, Իրանից, Ուկրաինայից[22]:

Համաձայն հետազոտողների կողմից ընդունված հիմնական մոտեցման՝ հայաստանյան համատեքստում հայրենադարձությունը սահմանվում է որպես էթնիկ հայերի վերադարձ, բնակեցում ու իրավունքների վերականգնում Հայաստանում, ովքեր ծնվել են արտերկրում և կրում են այլ երկրի քաղաքացիություն[23]: Միջազգային փորձը փաստում է, որ հայրենադարձության ալիքները հատկապես ակտիվ են լինում հետպատերազմական կամ ճգնաժամային իրավիճակներից հետո: Վերջինիս արդյունքում հայրենադարձությունը շատ երկրներում դիտարկվում է որպես միգրացիոն քաղաքականության բաղկացուցիչ մաս:

---

[19] Մելիքսեթյան Հ. Ու. Արևմտահայերի բռնագաղթը և սփյուռքահայերի հայրենադարձությունը, Սովետական Հայաստան, Երևան, ԵՊՀ 1975, էջ 77-78:

[20] Ходжабекян В. Асатрян Б. Демографические аспекты урбанизации в Армянской ССР, Ереван: 1990, с. 68.

[21] Пашаян А. Армянская община Ирака: новые вызовы/ http://www.noravank.am/rus/issues/detail.php?ELEMENT_ID=3061.

[22] «Հայրենադարձության փորձը ու ինտեգրումը Հայաստանում. խոչընդոտները և հնարավորությունները», Երևան 2015, էջ 33:

[23] Գևորգյան Լ. Սփյուռքահայության ներգաղթի իրավական կարգավորման խնդիրը: ՎԷՄ համահայկական հանդես, Երևան, N 4/44, 2013:

ՍԻՐԻԱՀԱՅԵՐԻ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Սիրիահայերի ինտեգրման գործընթացներին անդրադառնալիս կարևոր է դիտարկել նրանց ինտեգրման առանձնահատկությունները՝ կապված սոցիալ-ժողովրդագրական ցուցիչների հետ: Քանի որ յուրաքանչյուր ժողովրդագրական կամ սոցիալական խումբ առանձնահատուկ ձևով կարող է անցնել ինտեգրման գործընթացը, հետևաբար, ուսումնասիրության օբյեկտը խորքային վերլուծության ենթարկելու նպատակով անհրաժեշտություն է առաջանում, նախ, համակարգել և դուրս բերել սիրիահայերի ընդհանուր նկարագիրը՝ սոցիալ-ժողովրդագրական ցուցիչների, ընտանեկան կարգավիճակի, կրթական մակարդակի և այլ հատկանիշների հետ փոխկապվածության մեջ[24]: Ըստ երկրորդային տվյալների վերլուծության՝ առանձնացվել են երկու խոշոր՝ 18-39տ. (43%) 40տ. և ավելի (57%) տարիքային խմբեր, որոնց վարքագիծը, ունեցած խնդիրներն ու դրանց հաղթահարման գործընթացը միմյանցից տարբերվում են: Ըստ սեռային կազմի՝ 2013-2015թթ. ներգաղթած սիրիահայերի 60%-ը կանայք են, 40%-ը՝ տղամարդիկ: Ըստ կրթական չափանիշի՝ Հայաստան ներգաղթած սիրիահայերի 33%-ն ունի միջնակարգ կրթություն, 28%-ը՝ միջին մասնագիտական, 39%-ը՝ բարձրագույն: Համաձայն 2016թ. Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) նախաձեռնությամբ իրականացրած հարցումների՝ Հայաստան ներգաղթած սիրիահայերը գերազանցապես հանդիսանում են միջին խավի ներկայացուցիչներ, նրանց կրթական մակարդակը բարձր չէ[25]: Ըստ ամուսնական կարգավիճակի չափանիշի, սիրիահայերի գերակշիռ մասն ամուսնացած է (69%): Այսինքն սիրիահայերի մեծ մասը Հայաստան է տեղափոխվել ընտանիքի հետ, հետևաբար, առաջնային սոցիալական միջավայրը թերևս առկա է, ինչը նոր միջավայրում ինտեգրման համար կարևոր պայման է: Տարիքային խմբերի հետ փոխկապվածության մեջ դիտարկելիս տեսնում ենք, որ Հայաստան տեղափոխված

[24] «Սիրիայից Հայաստան ներգաղթած հայերի ադապտացման և ինտեգրման խնդիրների լուծման ուղիները» ծրագիր, 2013-2015թթ.: Իրականացված ձևայնացված հարցմանը մասնակցել է 370 սիրիահայ, տվյալները մշավել են վիճակագրական վերլուծության SPSS փաթեթով:

[25] http://www.edrc.am/images/Useful_Publications/aer_2016_eng.pdf/ Հայաստանի տնտեսական զեկույց 2016թ., սիրիահայերի տնտեսական ինտեգրումը Հայաստանում

սիրիահայերի 50 և ավելի տարիքային խմբի և՛ տղամարդկանց, և՛ կանանց մեծամասնությունն ամուսնացած է, իսկ ահա 18-49 տարիքային խմբի և՛ տղամարդկանց, և՛ կանանց մեծամասնությունն ամուսնացած չէ:

Ըստ քանակական հետազոտության տվյալների՝ 2013-2015թթ. ներգաղթած սիրիահայերի կեսից ավելին չի աշխատում, մյուսներին պայմանականորեն կարելի է բաժանել երեք հիմնական խմբերի՝ ինքնազբաղվածներ, գործարարներ և վարձու աշխատողներ: Գործարարները կազմում են բավականին մեծ թիվ՝ շուրջ 47%, ինքնազբաղվածները կազմում են 20%, իսկ վարձու աշխատողները՝ 33%: Վարձու աշխատողների մեծ մասը զբաղված է սպասարկման ոլորտում, ապա՝ առևտրի, արհեստագործության և այլ բնագավառներում: Նոր միջավայրում սիրիահայերի սոցիալ-մշակութային առանձնահատկություններն առաջացնում են նաև նրանց մասնագիտական և աշխատանքային գործունեության չափանիշների տարբերություններ: Տեղափոխության արդյունքում աշխատանքային կարգավիճակի փոփոխության վրա ազդում է ոչ միայն ստեղծված ծայրահեղ վիճակը, այլ նաև նշված տարբերությունները: Զբաղվածության նախկին ոլորտի և ներկայիս զբաղվածության ոլորտի համապատասխանություն հիմնականում նկատվում է սպասարկման և արհեստագործության ոլորտի աշխատողների մոտ:

Դիտարկենք սիրիահայերի ինտեգրման խնդիրները և դրանց հաղթահարումը տարբեր ոլորտներում:

Խոսելով Հայաստանում սիրիահայ ներգաղթյալների **սոցիալական ներգրավվածության ու սոցիալական կապերի** գործառնության խնդիրների մասին՝ անհրաժեշտ է անդրադառնալ մի քանի ուշագրավ հանգամանքների: Առաջինը վերաբերում է սիրիահայ ներգաղթյալների առանձնահատուկ սփյուռքյան ինքնությանը: Կարևոր է նշել, որ սիրիահայերն ունեն բարձր մակարդակի ինքնակազմակերպման փորձ և ներուժ, ինչը ձևավորվել է տարիներ շարունակ օտարազգի միջավայրում ապրելու արդյունքում: Հայաստանում նրանց ինքնակազմակերպական վարքը կարելի է համարել վերոնշյալի իներցիա: Պատահական չէ, որ սիրիահայերը Հայաստանում վերարտադրում են Սիրիայում արդեն գործառնած կազմակերպություններ: Հարկ է ընդգծել նաև, որ ստեղծված նոր կազմակերպությունները հիմնականում կրում են իրավիճակային բնույթ: Իրենց խնդիրների միջոցով սիրիահայերը կենտրոնացնում են նաև տարբեր

համահայկական կազմակերպությունների ուշադրությունը: Այնուամենայնիվ, այս բոլոր կազմակերպությունները գործում են փոխկապված ձևով, ինչը, մի կողմից, հնարավորություն է ընձեռում մեկ ընդհանուր դաշտ բերել սիրիահայերին և ծագած խնդիրներին ավելի արագ ու արդյունավետ լուծում տալ, մյուս կողմից՝ ստեղծել յուրատեսակ սիրիահայկական միջավայր, որն առավել սահուն կդարձնի Հայաստանում ադապտացման նախնական գործընթացը:

Հայաստանի սոցիալական միջավայրում ներգրավվածության վերաբերյալ հաջորդ կարևոր հանգամանքը երկու մշակույթների (Սիրիայում ու Հայաստանում նրանց մշակութային տարբերություններ) ոչ շեշտակի տարբերությունն է՝ պայմանավորված նույն էթնիկ պատկանելությամբ, սիրիահայերի համայնքային կյանքով ու էթնոմշակութային ինքնության պահպանմամբ: Անշուշտ, առկա են մի շարք մշակութային տարբերություններ, սակայն դրանք դրսևորվում են ադապտացման ավելի ուշ փուլերում:

> *«Բոլորս էլ հայեր ենք, սակայն մշակույթով ու կենցաղով հայաստանցիներից տարբերվում ենք: Սիրիայի մեջ էլ, բնականաբար, արաբներից էինք տարբերվում, բայց եթե համեմատելու լինենք, անկասկած, տեղացի հայերի հետ շփվելը շատ ավելի դյուրին է»: [ար., 42տ., Հայաստան]*

Սոցիալական հարաբերություններում առաջին խնդիրներից սիրիահայերը նշում են սոցիալական ցանցի (կապերի) բացակայության և Հայաստանում դրա կարևորության մասին:

> *«Հայաստանում առանց ծանոթի մի բան չես կարողանում անել, մի խնդիր լուծել, եթե ծանոթ չունես ուրեմն տասն անգամ կձախողես նոր կգտնես ճիշտ ճամփան»:[ար, 33տ., Հայաստան]*

Վերջինիս պատճառով սիրիահայերի մոտ բացակայում է վստահությունը պետական կառույցների նկատմամբ: Հասարակության մակարդակով հարաբերությունների մեջ սիրիահայերն ունեն և՛ դրական, և՛ բացասական փորձառություն: Սիրիահայերի կողմից կարևոր խնդիր է դիտարկվել նաև, ըստ իրենց ընկալման՝ խտրական վերաբերունքը հիմնականում գումարային հարցերում:

«…մեզանից միշտ ավելի շատ են վերցնում, քան հայաստանցուց: Հենց սփյուռքահայի ակցենտ են լսում, անմիջապես գին են բարձրացնում»: [իգ, 43տ., Հայաստան]

Վերջինս առավելապես հիմնված է սփյուռքի հայերի վերաբերյալ առկա կարծարատիպերի վրա:

Պետք է նշել, որ մշակութային տարբերությունների համահարթեցման իրականացվող քաղաքականության մեջ համապատասխան գերատեսչությունների կողքին բավականին մեծ դեր ու ներուժ ունեն ԶԼՄ-ը, համացանցը: Դրանք թույլ են տալիս ծանոթանալ, ճանաչել միմյանց մշակույթները և տարբեր շրջանակներում բազմաբնույթ շփումների միջոցով գտնել տարբերությունները հաղթահարելու ուղիները: Այս համատեքստում հանրային ընկալման և դիսկուրսի մեջ կարևոր դերակատարում ունեն ԶԼՄ-ի կողմից տարածվող սիրիահայերի մասին տեղեկատվությունն ու դրանց արձագանքը տարբեր շրջանակներում: Հայաստան ներգաղթած սիրիահայերի ադապտացման և ինտեգրման խնդիրների քննարկումը ԶԼՄ-ում մեծ նշանակություն ունի: Այն ոչ միայն արտացոլում է խնդրին առնչվող մարդկանց կարծիքները, այլ նաև ազդում է այդ նույն կարծիքի վրա, կարող է փոխել խնդիրը կրողների վարքագիծը[26]:

«Մամուլով շատ խոսեցին մեր մասին, տարբեր կարծիքներ էին հայտնում, տարբեր բաներ գրում: Լավ կլիներ մամուլը օգտագործվեր մեզ հայաստանցուն ավելի մոտ դարձնելու համար»: [իգ, 39տ., Հայաստան]

«Շատ հաճախ թերթերի գրածները հորինված են և թյուր կարծիք են ստեղծում: Սիրիահայերի կողմից արտաբերվածը դրական չեն հրապարակում կամ քիչ են հրապարակում, իսկ բացասականները՝ լայնորեն տարածում են»: [ար., 28 տ., Հայաստան]

Սիրիահայերի և հայաստանցի հայերի միջև հանդուրժողականության և համագործակցային հարաբերությունների վրա կարելի է ազդել տեղեկատվական քաղաքականության միջոցով, որը կարող է պետական ռազմավարական ծրագրի մաս կազմել:

---

[26] Բարսեղյան Ս. Սիրիահայերի ներգաղթը Հայաստան. Մամուլի արձագանքները, Սիրիահայերը Հայաստանում. ինտեգրման ուղիները, Երևան 2015, էջ 104-134:

Սոցիալական միջավայրում ներգաղթյալների ներգրավվածության աստիճանն արտահայտվում է ոչ միայն մշակութային, այլև կրթության, զբաղվածության, առողջապահության, իրավական, քաղաքական ոլորտներում:

Մասնավորապես, անդրադառնանք մշակութային տարբերություններին և կրթության բնագավառում ունեցած փորձին: Մշակութային տարբերությունների մասին խոսելիս սիրիահայերը հիմնականում նշում են լեզվական տարբերությունների, առօրյա կենցաղային շփումների կամ աշխատանքային մշակույթների տարբերությունների մասին:

> *«Երկուսս էլ հայ ենք, բայց մտածելակերպի տարբերություն ունենք, ես արևելքի մարդ եմ, հայաստանցին ավելի շուտ արևմուտքի մարդ է»: [ար., 39տ., Հայաստան]*

Լեզվամտածողության տարբերություններն առավել քան արդիական են. ներգաղթյալ սիրիահայերի և հայաստանցիների՝ միմյանց չհասկանալու պատճառներից մեկն էլ դա էր: Առօրյա մշակութային պրակտիկաներում սիրիահայերը շեշտադրում են այնպիսի խնդիրներ, ինչպիսին է ազգային կամ եկեղեցական տոների նկատմամբ տարբերվող վերաբերմունքը: Հասկանալի է, որ Սիրիայում ինքնության պահպանման համար առավել ակտիվ են պահվել տոնածիսական ավանդույթները, սակայն Հայաստանում նվազել է դրա պահանջը, ինչն առաջ է բերել, նախ, սպասումների անհամապատասխանություն սիրիահայերի մոտ, հետագայում նաև՝ վարքային փոփոխություն:

> *«Սկզբում մտածում էինք՝ սա ինչ բան է Հայաստանի մեջ, նորմալ եկեղեցի չգնալ, տոները մեծ շուքով չնշել, հետագայում մենք էլ սկսեցինք այդպես մտածել, քիչ-քիչ հարմարվել»: [իգ, 36տ., Հայաստան]*

Միաժամանակ, այս բնագավառում կարելի է արձանագրել ինտեգրման հաջող փորձառություն, որի արդյունքում սիրիահայերը սկսել են նշել այնպիսի տոներ ու մասնակցել այնպիսի իրադարձությունների, որոնք նախկինում չեն եղել Սիրիայում:

> *«Նոր տոների մասին իմացանք Հայաստանում, որ Սիրիայում չգիտեինք, սկզբում ձևական նշում էինք, հիմա սպասում ենք»: [ար., 42 տ., Հայաստան]*

Կրթության հարցում սիրիահայ ներգաղթյալների նկատմամբ ՀՀ պետական քաղաքականությունն ի սկզբանե ուներ թերացումներ, քանի որ այս ոլորտում ևս

չկար հստակ մշակված ռազմավարություն: Սակայն այն քայլերը, որոնք իրականացվեցին կրթության ուղղությամբ ներգաղթի առաջին հոսքերին զուգահեռ, կարելի է տեսականորեն գնահատել որպես մեկուսացնող (exclusive) մոտեցում[27]: Այն բխում էր ստեղծված իրավիճակից: Այս ոլորտում առկա էին կրթական համակարգերի, բարձրագույն և միջնակարգ կրթական ծրագրերի տարբերություններ, արևմտահայերենի և արևելահայերենի որոշակի տարբերություններ, բուհական վարձավճարների խնդիրներ: Դրանք ՀՀ կրթական համակարգում ուսանողների և աշակերտների սահուն ինտեգրման խոչընդոտներ էին ստեղծում:

> *«Նախքան սիրիական դպրոցի բացումը, երեխաներս հանրային դպրոց էին հաճախում, նրանք շատ անտարբեր ու անտեղյակ էին ամեն ինչից և միշտ դժգոհ էին վերադառնում: Հետո գնացին այդ դպրոց սիրիահայ երեխաների հետ միասին: Բայց միայն սկզբում էր լավ, հետո առաջացան խնդիրներ, չէին կարողանում հաղորդակցվել բակի երեխաների հետ»: [իգ., 35տ., Հայաստան]*
>
> *«Մեր ընտանիքում խնդիր ծագեց, երբ երեխան չորրորդ դասարանից անցավ հինգերորդ, մի խոսքով, բավականին լուրջ ու ծանր խնդրի առաջ կանգնեցինք, որը կապված էր ուսումնական ծրագրերի հետ: Սկզբում կարծում էինք, թե այդ խնդիրը միայն սիրիահայերի համար է, սակայն հետո պարզվեց, որ չմշակված ծրագիր է, որը մի անդունդ է ստեղծում երկու դասարանների միջև, որն էլ առաջ բերեց լրացուցիչ բարդություններ մեր երեխաների համար»: [իգ., 43տ., Հայաստան]*

Մյուս կողմից, առկա էր անհրաժեշտ մանկավարժական, վարչական ներուժ՝ առանձին դպրոց բացելու համար, ինչը միաժամանակ կապահովեր և՛ երեխաների/երիտասարդների անընդհատ կրթությունը, և՛ մի խումբ մասնագետների զբաղվածությունը: Նման որոշում կայացվեց և իրագործվեց բավականին կարճ ժամանակահատվածում, ՀՀ պետական կառույցների, սիրիահայ համայնքի ներկայացուցիչների և արտասահմանյան աջակից կազմակերպությունների համագործակցության արդյունքում: Պետական գերատեսչությունների փորձագետներից մեկը նշում է, որ այդ ուղղությամբ աշխատել են հետևյալ ձևով.

[27] Կառավարության կողմից բացվեց սիրիական ծրագրով «Կիլիկյան» դպրոցը, որը գործեց մեկ ուսումնական տարի:

«...մեզ զանգահարում են գործատուները և մասնագետներ են ուզում, մենք էլ փորձում ենք սիրիահայերին աջակցել: Դա շատ պարզ մեխանիզմ է, մենք շատ ավելի մարդկանց ենք աշխատանքի տեղավորել, քան Զբաղվածության տարածքային կենտրոնը: Սա շատ հաջող ստացվեց, քանի որ գործընկեր կառույցները բավականին շատ են:»

Այնուամենայնիվ, սիրիահայերի համար նախատեսված դպրոցը փակվեց, ըստ էության, նպատակ ունենալով ներառել սիրիահայ աշակերտներին տեղական հանրակրթական միջավայր: Հետազոտության տվյալներից պարզ է դառնում, որ սա որոշակի դրական ազդեցություն ունեցավ հատկապես ցածր տարիքի երեխաների վրա: Սակայն տարիքի բարձրացման հետ աստիճանաբար ավելանում էին ինտեգրման խնդիրները: Ինչպես նաև, դպրոցի փակման արդյունքում, մի շարք բարձրագույն կրթությամբ մասնագետներ կորցրին իրենց աշխատանքը:

ԲՈՒՀ-ական համակարգում ներառվելն առավել բարդ խնդիր է: Ինչպես նշում են հարցվողները՝ Սիրիայում առավել մրցունակ մասնագիտությունները Հայաստանում արդիական չեն (բնապահպանական ճարտարագիտություն, սննդագիտական ճարտարագիտություն և այլն): Մյուս խնդիրն առաջանում է կապված կրթական մասնագիտական աստիճանաշնորհման հետ:

«Սիրիայում ես բուժքույրական էի սովորում, համարվում էր բարձրագույն կրթություն, մասնագիտանում ես 4 տարում: Հայաստանում միայն երկու տարի քոլեջում պետք է սովորեմ՝ բարձրագույն կրթությունից տեղափոխվելով միջին մասնագիտական կրթության դաշտ»: [հգ., 38տ., Հայաստան]

Բացի այդ առկա է նաև վարձավճարի խնդիրը: Վերջինս իրականանում է սփյուռքահայ բարերարների աջակցությամբ կամ պետական զիջումների միջոցով:

Նախադպրոցական, դպրոցական, ԲՈՒՀ-ական և կրթական այլ հաստատություններ կամ դասընթացների հաճախող սիրիահայերին հանդիպած դժվարությունների ու խնդիրների մասին հարցվողների մեկնաբանություններից պարզվում է, որ դեռևս խնդիրներ կան սիրիահայ և տեղացի երեխաների դպրոցում համատեղ կրթության պարագայում. դպրոց-ընտանիք, ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերությունները գտնվում են անցումային վիճակում, առարկաների ու ծրագրերի միջև եղած տարբերությունները դժվարին կացության առջև են կանգնեցնում երեխաներին:

Ձեռնարկատիրական գործունեության դեպքեր: Հայաստանում սիրիահայերի տնտեսական ինտեգրման խնդիրների բացահայտման նպատակով դիտարկվել են մի քանի ներգաղթյալների ներդրումային փորձը: Ստորև ներկայացվում են ինտեգրման մի քանի դեպքեր, որոնց ընտրության համար չափանիշ է հանդիսացել ոչ միայն սոցիալական և մշակութային, այլև առավելապես տնտեսական ինտեգրման ցուցանիշը: Մի շարք հետազոտությունների արդյունքները թույլ են տալիս եզրակացնել, որ ներգաղթյալների մոտ ինտեգրման տարբեր ուղղություններն ընթանում են զուգահեռ, ուստի, անդրադառնալով ինտեգրման մի կողմին, հարկ է համադրել նաև մյուսները: Բացի դրանից, որպեսզի պարզենք ներգաղթյալների ինտեգրման ոչ միայն նախնական ցուցանիշները, այլև հնարավորություն ունենանք որոշ ընդհանրացումներ և կանխատեսումներ անել, անհրաժեշտ է ինտեգրման գործընթացի համատեքստ ընդունել տնտեսական կողմը:

Այսպիսով, հետաքրքիր էր պարզել՝ արդյոք էական տարբերություն կա ինտեգրման համատեքստում վարած տնտեսական ակտիվության ձևի, չափի, ոլորտի միջև: Դեպքերի ընտրությունը կատարվել է մի շարք չափանիշներով: Նշված նպատակով քննարկվում են տնտեսական գործունեության երեք ձև՝ սպասարկում, ծառայություն և արտադրություն, նպատակ ունենալով ընդգրկել տնտեսական ակտիվության բոլոր կողմերը, ինչպես նաև տարբեր չափերի, սպառման և ուղղվածության կազմակերպություններ: Ներկայացվող երեք դեպքերը տիպական են տնտեսական ներդրումային գործունեության համար, ինչը հնարավորություն է տվել համապարփակ տեղեկատվություն ստանալ առաջադրված խնդրի վերաբերյալ[28]:

Կազմակերպությունների հիմնադրման մոտիվացիայի, պատմության, ստեղծման ընթացքում աջակցության և առաջացած խնդիրների հաղթահարման մեխանիզմները բացահայտելու համար իրականացվել են հարցազրույցներ ընկերությունների հիմնադիրների հետ: Ստացված արդյունքները վերլուծվել են տնտեսական և սոցիալական ուղղություններով:

---

[28] Հետազոտության շրջանակներում դիտարկվել են սիրիահայ ներգաղթյալների կողմից հիմնած հետևյալ կազմակերպությունները՝
«AVA shoes» ընկերությունը (հիմնադրվել է 2014թ.-ին, 4-8 աշխատող, ոլորտը՝ արտադրություն և վաճառք, ՍՊԸ), «Դերյան» ռեստորանը (հիմնադրվել է 2015թ.-ին, մոտ 5 աշխատող, ոլորտը՝ սպասարկում և ծառայություն, ՍԲԸ), «Մոսինի» ընկերությունը (հիմնդարվել է 2016թ.-ին, մոտ 30 աշխատող, ոլորտը՝ արտադրություն և վաճառք, ՍՊԸ):

Համաձայն տվյալների՝ ներգաղթյալների մի մասն ունեցել է նախնական որոշակի պատրաստվածություն ներդրումային դաշտում, որի շնորհիվ կարողացել է հաղթահարել տեղում ձեռնարկատիրության նրբությունների հետ կապված խնդիրները: Մյուս մասը, լինելով սկսնակ տվյալ ոլորտում, գործ սկսելիս բախվել է ոչ միայն տնտեսական դաշտի դժվարությունների, այլև տվյալ գործի մեջ առաջացող տարատեսակ խնդիրների:

Ներգաղթյալների մի մասը Հայաստանում հաստատվել է ընտանիքներով և տնտեսական գործունեության մեջ ևս ներգրավում է հարազատներին, ընտանիքի անդամներին: Այս սկզբունքով գործունեություն վարելը հնարավորություն է ընձեռում խուսափել լրացուցիչ աշխատուժի, ֆինանսական և կառավարման կամ այլ ռեսուրսի ներդրումից: Մյուս կողմից, նոր միջավայրում ընտանիքի ներառումը տնտեսական գործունեության մեջ կարող է ապահովել նրանց զբաղվածությունը և ներառումը սոցիալական միջավայր:

Կարևոր է դիտարկել նաև հակառակ ազդեցությունը. թե ինչ արձագանք է ստանում տնտեսական գործունեության դաշտում սփյուռքահայ լինելու փաստը: Կախված նրանից, թե ինչպես են ընկալում սփյուռքահայ ներդրողին հայաստանյան միջավայրում, նրա ծագումը դառնում է կարևոր գործոն և որոշակի վերաբերմունք ձևավորում նրա վարած բիզնեսի նկատմամբ: Սրա վերաբերյալ, սակայն, ուսումնասիրված ներդրողների կարծիքները տարբերվում են.

> *«Հատուկ վերաբերմունք չեմ զգացել, կարգին է ամեն ինչ, դժվարություններ չենք ունեցել ոչ հանրության կողմից, ոչ էլ պատկան մարմինների»:*
>
> *«Անշուշտ տարբեր մտածելակերպեր կան տեղացիների և տեղափոխված մարդկանց միջև»:*

Հետաքրքիր է, որ չնայած այն հանգամանքին, որ ավելի արդյունավետ կլիներ բիզնես վարել ձեռնարկատիրական միևնույն մշակույթը կրող անձանց հետ և միավորել իրենց ռեսուրսները բիզնեսի զարգացման համար, իրականացնել ներդրման փորձի փոխանակություն, այնուամենայնիվ, սփյուռքահայ ներդրողները նախընտրում են առավելապես անձնական բնույթի կապեր հաստատել Հայաստանում իրենց ծագմամբ հայ ներդրողների հետ:

Սիրիահայ ներգաղթյալների տնտեսական գործունեության մեջ կարևոր է պարզել նրանց մոտիվացիան: Կախված նրանից, թե ինչ շարժառիթ ունի ներդրողը՝ հնարավոր է դուրս բերել նրա գործունեության առանձնահատուկ կողմը, ուղղվածությունը, բնույթը:

Սիրիահայերի մի մասը ստիպված է եղել տեղափոխվել Հայաստան, շարունակել նախկին գործը կամ ծավալել այլ տիպի ներդրումային գործունեություն: Ելնելով հանգամանքներից, մեծամասամբ իրականացվել է իրավիճակային ներդրումային գործունեություն՝ առանց նախնական մտադրության: Ներդնելով տվյալ պահին հնարավոր բոլոր ռեսուրսները և հիմնվելով իրենց հմտությունների վրա՝ սիրիահայերը սկսել են ներդրումային գործունեություն՝ հընթացս կողմնորոշվելով գործունեության հետագա ուղղվածության հարցում:

Տնտեսական գործունեություն իրականացնելիս սիրիահայերը բախվել են մի շարք դժվարությունների, ինչպես օրինակ՝ ՀՀ տնտեսության փոքր շուկան, անկայուն տնտեսական միջավայրը, վարչարարական, ինստիտուցիոնալ խնդիրները, ինչպես նաև միջավայրային անհամապատասխանությունը, քիչ տեղեկացվածությունը, սոցիալական կապերի բացակայությունը:

> *«Այստեղ թղթաբանությունները շատ են: Մեր գործը կոշիկ արտադրելն է, ոչ թե թղթաբանությունը կամ հաշվապահությունը: Նաև տուրքերի առումով, պետք է որոշ հարկային արձակուրդ լինի նոր սկսվող բիզնեսի համար»:*

Ձեռնարկատերերի կողմից հնչեցրած պատասխաններն ընկալվում են որպես անհաղթահարելի դժվարություններ, որոնք կարող են լուծվել միայն պետական մակարդակով կամ համապատասխան մարմինների կողմից: Հատկանշական է սիրիահայերի շրջանում տարածված այն ընկալումը, որ տնտեսական դաշտին վերաբերող խնդիրներն առանձնահատուկ թիրախավորում ունեն և արհեստականորեն բարդացնում են ներգաղթյալի գործունեությունը: Սակայն տնտեսական փոխազդեցության արդյունքում ինքնըստինքյան պարզ է դառնում, որ դրանք ունեն համակարգային բնույթ և կարող են առնչվել ոչ միայն սփյուռքահայ ներդրողներին, այլ նաև ներդրումային դաշտում գործունեություն ծավալող ցանկացած մասնակցի: Ահա այս խնդիրն իր արտահայտությունն է գտել հետևյալ պատասխանի մեջ.

«Երբևէ խնդիր չեմ ունեցել ո՛չ հարկային ծառայության, ո՛չ որևէ այլ ուժի կողմից: Մի բան պետք է ասեմ. եթե նույնիսկ Հայաստանում այս մասնավոր ոլորտում կա մրցակցություն այլ նմանատիպ կազմակերպությունների հետ, ապա դա արդար մրցակցություն է»:

Ինչպես երևում է մեջբերումից, միջավայրային դժվարություններն ամբողջանում են առավելապես սոցիալական համատեքստում: Սիրիահայ ձեռնարկատերերի համար կարևորագույն խնդիրներ են դիտարկվում տնտեսվարման մշակույթների, աշխատանքի նկատմամբ վերաբերմունքի տարբերությունները, որոնք կարող են հաղթահարվել մի շարք ուղիներով. մի կողմից՝ բարձրացնելով ներդրողի տեղեկացվածության աստիճանը, մյուս կողմից՝ վերափոխելով հայաստանյան գործարար միջավայրը: Այս առումով անհրաժեշտ է ուշադրությունը կենտրոնացնել ներդրումային գործունեության սոցիալական բաղադրիչի վրա՝ ստեղծելով ընդհանուր հարթակ սիրիահայերի շրջանում պոտենցիալ ներդրողների համար:

«Ի սկզբանե ստացել եմ Սփյուռքի նախարարության աջակցությունը ցուցահանդեսներին ներկայանալու առումով, սակայն այլ աջակցություն որևէ անձից կամ կազմակերպությունից չեմ ստացել»:

«Բայց, անկեղծ որ լինեմ, երբեք չեմ էլ ակնկալել այդպիսի աջակցություն: Չեմ ունեցել այնպիսի խնդիրներ, որոնք ունեն աջակցության կարիք»:

«Ոչ մի օգնություն չենք ակնկալել, և, կարծում եմ, կարիք չկա օգնություն ակնկալելու, քանի որ մարդն իր սեփական բիզնեսն է արել, հարկն էլ պետք է վճարել, մենք էլ պետք է վճարենք»:

«Այստեղ բիզնես ենք բացում, երկրի տնտեսությունը փորձում ենք առաջ տանել, այդ առումով Կառավարության կողմից պետք է աջակցություն լինի, գոնե հարկերի հետաձգման առումով»:

Ինչպես երևում է մեջբերումներից, համապատասխան քայլեր ձեռնարկվել են, սակայն ոչ միշտ են ունեցել անհրաժեշտ թիրախավորումը և արդյունավետությունը:

ՀՀ-ում սիրիահայերի տնտեսական ակտիվության հաջորդ կարևոր կողմը հետագա մտադրությունների և նրանց ձեռնարկատիրական գործունեության հեռանկարների բացահայտումն է: Այդ հարցը պարունակում է երկու բաղադրիչ՝ գործնական (ձեռնարկատիրական գործունեության զարգացման ի՞նչ հեռանկար կա և

ի՞նչ ուղղությամբ) և անձնական (որտե՞ղ է տեսնում իր կամ իր ընտանիքի ապագան): Ներգաղթյալների մի մասը, իրենց հետագա մտադրությունները կապում են անմիջապես ներդրումային գործունեության հետագա ընթացքի հետ:

«Եթե ամեն ինչ հաջող ստացվի, չեմ մտածի հեռանալու մասին, հակառակ դեպքում՝ երևի կլքեմ այս երկիրը»:

«Հիմա այստեղ ենք աշխատում, ամբողջ օրը գործի մեջ ենք, հուսով ենք այստեղ կկարողանանք ապրել»:

Հատկանշական է, որ ոմանք, ի սկզբանե, իրենց ռազմավարության մեջ հատուկ «ազգային» ուղղվածություն են տալիս բիզնեսին՝ անտեսելով այն հանգամանքը, որ վերջինս կարող է առաջացնել մրցակցության կամ սպառման խնդիր, ի վերջո, հանգեցնել շահույթի նվազեցման: Այստեղ կարևոր է այն, որ ներդրողները, կիրառելով այս մոտեցումը իրենց բիզնեսում՝ փոփոխություն են բերում նաև Հայաստանում ձեռնարկատիրական մշակույթի մեջ:

«Մենք հենց սկսեցինք «Արտադված է Հայաստանում» պիտակով, ինչը հանգեցրեց շուկայում վաճառքի, մրցակցության դժվարությունների, բայց մեր փորձը բավական լավ արձագանք ունեցավ ժողովրդի մեջ, քաջալերում են, չեն հավատում, որ հայկական արտադրանք է: Դա խիզախ քայլ էր, բայց մենք նպատակ ունեինք հենց հայկական ապրանք կարել, հայկական բրենդ ներկայացնել»:

«Քանի որակով գործ ենք անում, ուզում ենք, որ հայկական արտադրանք գրվի, և տնտեսության մեջ ճյուղ ենք զարգացնում, և մարդիկ ուրախանում են, որ տեսնում են հայկական է»:

Արտագաղթի միտումներ: Հայաստանում, սիրիահայերի ինտեգրմանը զուգահեռ, առանձին ուշադրության են արժանի նաև նրանց արտագաղթի մտադրությունները՝ ներգաղթի պահից առ այսօր: Կարևոր է դիտարկել արտագաղթի տրամադրություններն ու միտումները նաև սոցիալ-ժողովրդագրական հատկանիշների համատեքստում: Հայաստան տեղափոխված սիրիահայերի արտագաղթը պետք է առանձնացնել՝ ըստ մի քանի փուլերի և ուղղությունների: Արտագաղթի առաջին հոսքն արձանագրվել է ներգաղթի սկզբնական տարիներին, ապա՝ միտումը նվազել է: Համաձայն փորձագիտական տվյալների՝ Հայաստանում գտնվող 22 հազար սիրիահայերի 2-3 հազարը գտնվում են անընդհատ շարժի մեջ:

Եթե առաջին տարիներին բավական մեծ թիվ էին կազմում Սիրիա վերադառնալու ցանկություն ունեցողները, ապա ներկայումս այդ թիվը կտրուկ նվազել է: 2013-2015թթ. իրականացված հետազոտության տվյալներով, սիրիահայերի շուրջ 45 %-ը նախընտրել է վերադառնալ Սիրիա, մեկ երրորդը (33%) ցանկացել է հաստատվել Հայաստանում, իսկ ամեն չորրորդը (22%) մտադրություն ուներ մեկնել արտասահման[29]: Համաձայն 2016թ. GIZ-ի ծրագրի շրջանակներում իրականացված հարցումների՝ Սիրիահայերի 43%-ը բացառում է երբևէ Սիրիա վերադառնալու հնարավորությունը, մինչդեռ 37%-ը Սիրիայում իրավիճակի կարգավորման դեպքում կնախընտրի հետ վերադառնալ: Հարցվածների 20%-ը դժվարացել է պատասխանել այս հարցին: Նույնիսկ այն անձիք, ովքեր ունեն որոշակի տնտեսական կապիտալ Սիրիայում, մտադիր են դրանք վաճառել և հետ վերադառնալ Հայաստան: Համաձայն հետազոտության արդյունքների՝ Սիրիա վերադառնալու մտադրություն ունեցող սիրահայերի 48%-ը իգական, իսկ 52%-ը արական սեռի ներկայացուցիչներ են: Սիրիա վերադառնալու ցանկություն ունեցողների կեսից ավելին 40 և ավելի տարեկան անձիք են, ովքեր այնտեղ ունեցել են որոշակի կապիտալ և որպես հայրենիք ևս ընկալում են այդ երկիրը: Բարձր տարիքային խմբի ներկայացուցիչներն ավելի շատ բարդություններ ունեն նոր միջավայրին հարմարվելու հարցում, քան երիտասարդները, ուստի նրանք չեն շտապում կամ չեն կարողանում ինտեգրվել նոր միջավայրին, այլ նախընտրում են վերադառնալ, ինչը հնարավորություն կտա վերականգնել իրենց նախկին սոցիալական կապերը, շարունակել իրենց նախորդ կյանքի հունը[30]: Ըստ սիրիահայերի որոշ մասի բնորոշման՝

> *«Այս 7 տարվա պատերազմի հետևանքով ազգային ու կրոնական փոքրամասնությունների նկատմամբ բավական շատ թշնամանք կա Սիրիայում մուսուլմանների կողմից»: [իգ., 61տ., Հայաստան]*

Այնուամենայնիվ, սիրիահայերի մի խումբ ներկայումս արդեն վերադարձել է Սիրիա[31]: Վերադարձածներից շատերը գոհ են, քանի որ այնտեղ կարողանում են հեշտ աշխատանք գտնել, միջավայրին ծանոթ են, պարզապես սոցիալական

---

[29] Ներսիսյան Ս., Տանաջյան Լ. Հայաստան ներգաղթած սիրիահայերի ինտեգրման խնդիրները, Սիրիահայերը Հայաստանում. ինտեգրման ուղիները (պատ. խմբ.՝ Կարապետյան Ռ., Բարսեղյան Ս.) Երևան, Գիտություն 2015, էջ 51:

[30] Նույն տեղում, էջ 45:

[31] Չկա հստակ վիճակագրություն՝ Հայաստան տեղափոխված սիրիահայերի որ մասն է վերադարձել Սիրիա:

կարգավիճակն ու հասարակական վերաբերմունքն է փոխվել: Ինչպես նշել է ինֆորմանտներից մեկը՝

> *«Պատերազմից առաջ ես չեմ կարողանում հիշել դեպք, որ արաբներն ինչ որ թշնամանք ունենային մեր՝ հայերիս նկատմամբ, եթե խտրականություն էլ կար, կառավարության կողմից էր, ոչ թե հասարակության մեջ: Իսկ հիմա այդ թշնամանքը կա»: [ար., 46տ., Սիրիա]*

Ըստ հարցվածների, Սիրիայում միջավայրը ծանոթ է և առավել հեշտ են լուծվում եղած ֆինանսական խնդիրները: Ուսումնասիրության ժամանակ Սիրիա վերադարձած անձանց հետ հարցազրույցներից պարզ է դառնում, որ նրանք հիմնականում այլ ակնկալիքներ են ունեցել և այնտեղ իրենց ձեռնարկատիրական գործը շարունակելու և վերաինտեգրվելու խնդիրներն առավել քան սուր են եղել: Ինչպես նշել է Սիրիա վերադարձած կանանցից մեկը՝ կանանց համար հայաստանյան միջավայրն ավելի ապահով է և նրանք ավելի անկաշկանդ են իրենց զգում՝ ներառյալ միջավայրային գործոնները, կանանց նկատմամբ վերաբերմունքը, տնտեսական գործունեության ազատ ընտրությունը, երեխաների ապահովությունը:

> *«Պատերազմը վնասել է ամեն բան, ոչինչ առաջվանը չէ: Չկա մի բնագավառ, որում կարող ենք մեզ հանգիստ զգալ և լիարժեք լինել: Եկել ենք վերականգնելու հույսով, բայց շատ հիասթափված ենք»: [իգ., 43տ., Սիրիա]*

Ըստ 2013-2015թթ. իրականացված քանակական հարցման տվյալների՝ Հայաստան տեղափոխված սիրիահայերի 46%-ն ունի բարձրագույն, 34%-ը՝ միջին մասնագիտական և 20%-ը՝ միջնակարգ կրթություն: Սա պայմանավորված է նրանով, որ բարձրագույն կրթությամբ անձիք դժվարությամբ են կարողանում գտնել իրենց հարմար աշխատանք Հայաստանում և կարծում են, որ իրենց երկրում ավելի մեծ հնարավորություններ կունենային ցանկալի աշխատանք գտնելու հարցում: Հետազոտության տվյալները ցույց են տալիս, որ երկու բևեռային խմբերը (բարձր և ցածր սոցիալական դիրք ունեցողներ) հակված են գնալու Սիրիա կամ այլ երկիր, իսկ միջին խումբը Հայաստանում առավել հարմարված խումբ է:

Համաձայն քանակական հետազոտության տվյալների (2013-2015)՝ Սիրիա վերադառնալու ցանկություն ունեցող խմբի ընտանեկան կարգավիճակի

ցուցանիշները ցույց են տալիս, որ նրանց մեծ մասը ամուսնացած է (78%): Հետազոտության տվյալներից պարզ է դառնում, որ նախկին միջավայր վերադառնալու որոշման վրա մեծ ազդեցություն ունի ընտանեկան կարգավիճակը, ինչպես նաև այն հանգամանքը, թե ում հետ է բնակվում հարցվողը մուտքի երկրում:

> *«Ողջ կյանքս այստեղ եմ անցկացրել, ցանկություն չունեմ ուրիշ տեղ մնամ, Հայաստանը թող մնա իմ երազած երկիրը: Ես այստեղ իմ տունն ու տեղն ունեմ»: [ար., 49տ., Սիրիա]*

Վերջինս խոսում է այն մասին, որ Սիրիայում ունեցած սոցիալական կապերն ու հարաբերությունները վերագնահատվել են, բայց քանի որ Հայաստանում չեն փոխարինվել և ինտեգրման ուղղությամբ որևէ գործընթաց չի եղել, ապա անգամ ոչ խաղաղ պայմաններում վերադարձած բարձր տարիքի սիրիահայերը, միևնույնն է, նախընտրում են մնալ Սիրիայում:

Հայաստանում հաստատված սիրիահայերի մեջ կա երկու հիմնական տարբերակում. առաջին խումբը հստակ քայլեր է ձեռնարկել և մտադիր չէ որևէ երկիր արտագաղթել, մյուս խումբը տարերային բնույթ է կրում և, ըստ հանգամանքների, կարող է փոխել մտադրությունը: Հայաստանում մնալու վերաբերյալ տեսակետները հետևյալն են.

> *«Հայաստանում պետք է մնանք այնքան, քանի դեռ կարող ենք հայթայթել մեր ապրուստը, եթե վիճակը դեպի վատը գնա անպայման կգնանք Եվրոպա կամ Կանադա»: [ար., 36 տ., Հայաստան]*
>
> *«Այստեղ պետք է մնանք: Այլևս չենք ուզում նորից տուն ստեղծել ու լքել, մի տեղ պետք է հանգրվանենք, լավ կլինի դա Հայաստանը լինի»: [ար., 62 տ., Հայաստան]*

Ըստ 2013-2015թթ. քանակական հետազոտության տվյալների՝ Հայաստանում հաստատվելու մտադրություն ունեցող սիրահայերի 36%-ն իգական և 64%-ն արական սեռի ներկայացուցիչներ են: Նրանց 39%-ը մինչև 40, իսկ 61%-ն ավելի բարձր տարիքի են: Հայաստանում հաստատվելու մտադրություն հայտնածների 52%-ն ունի բարձրագույն կրթություն, 14%-ը՝ միջին մասնագիտական, իսկ 34%-ը՝ միջնակարգ: Նրանց ճնշող մեծամասնությունն ամուսնացած է (73 %): Հասկանալի է, որ հաստատվելու որոշում ընդունելու համար կարևոր գործոն է ընտանիքի առկայության պայմանը: Հայաստանում հաստատվելու ցանկություն ունեցող և

ամուսնացած հարցվածների բացարձակ մեծամասնությունն այստեղ ապրում է ընտանիքի հետ, որից 75%-ը՝ մեծ ընտանիքի[32]:

Հայաստանից այլ երկիր մեկնելու հիմնական պատճառները սոցիալական և տնտեսական են, մասնավորապես առկա են բնակարանի և աշխատանքի խնդիրներ: Մեկնած կամ մեկնելու մտադրություն ունեցողները նախընտրում են Շվեդիա, Գերմանիա, Ֆրանսիա, ԱՄՆ, Կանադա, Բելգիա և այլ երկրներ, որտեղ փախստականների կարգավիճակով կարող են առավել շահավետ վիճակում լինել, քան Հայաստանում:

> *«Մենք շատ ուրախ էինք Հայաստանում, բայց տեղափոխվել ենք աշխատանք չգտնելու պատճառով: Որովհետև մեր և մեր երեխաների միջև տարիքային տարբերություն շատ կա, մտածեցինք, որ եթե Կանադա տեղափոխվենք երեխաներն ավելի շուտ աշխատել կսկսեն ուսման հետ միատեղ»: [հգ., 42տ., Կանադա]*
>
> *«Աշխատանքից գոհ չէի, եկա Դուբայ: Այստեղ կարող եմ աշխատավարձիս հաշվին Հայաստանում տուն գնել ընտանիքիս համար»: [ար., 38տ., Դուբայ]*

Մեկնելու տրամադրություն ունեցողները հիմնականում մարզային քաղաքներում ապրող սիրիահայերն են, ապա՝ Երևանի, ավելի քիչ՝ գյուղերի: Աշխատանքը և բնակարան ունենալը հիմնական գործոններն են, որոնք ազդել են Հայաստանում մնալու մտադրության վրա: Վերջինս հաստատվում է նաև մեկ այլ քանակական հետազոտության տվյալներով, ըստ որի, երկրից հեռացող սիրիահայերի 81,2-%ը մեկնելու հիմնական պատճառ են նշել սոցիալ-տնտեսական բնույթի, 10,4-%ը՝ փաստաթղթային, 4.2-%ը՝ իրավական, ևս 4,2 %-ը՝ մշակութային-հոգեբանական խնդիրները[33]:

Երկրորդային տվյալների վերլուծությունը ցույց տվեց՝ այլ երկիր գնալու մտադրություն ունեցող սիրահայերի 31%-ը իգական սեռի ներկայացուցիչներ են, իսկ 69%-ը՝ արական: Կանայք հիմնականում չեն ցանկանում մեկնել այլ երկիր՝

---

[32] Ներսիսյան Ս., Տանաջյան Լ. Հայաստան ներգաղթած սիրիահայերի ինտեգրման խնդիրները, Սիրիահայերը Հայաստանում. ինտեգրման ուղիները (պատ. խմբ.՝ Կարապետյան Ռ., Բարսեղյան Ս.) Երևան, Գիտություն 2015, էջ 56:

[33] Հակոբյան Գ. Հայաստանում բնակվող սիրիահայ ընտանիքների էթնոմշակութային առանձնահատկությունները/ Արդի հայ ընտանիքը փոխակերպվող հասարակությունում, Երևան 2017, էջ 302:

խուսափելով միջավայրային կտրուկ փոփոխություններից: Այլ երկիր մեկնել ցանկացողների խմբի 57%-ը մինչև 40 տարեկան են: Հասկանալի է, որ երիտասարդներին ավելի դյուրին են ադապտացվել նոր միջավայրին. նրանք ավելի պատրաստ են կյանքի նոր փոփոխություններին ու շրջադարձերին, ինչպես նաև ավելի քիչ են կապված սեփականության հետ:

Նույն տվյալների համաձայն՝ այլ երկիր գնացողների մեծամասնությունը՝ 51%-ն ունի բարձրագույն կրթություն, 35%-ը՝ միջնակարգ, իսկ 14%-ը՝ միջին մասնագիտական: Ենթադրվում է, որ բարձրագույն կրթությամբ անձիք ավելի մեծ ինքնաիրացման հնարավորություն և ներուժ ունեն տարբեր միջավայրերում: Միջնակարգ կրթությամբ անձինք, հավանաբար, ձգտում են այլ երկրում գտնել առավել հեշտ ապրուստի միջոց և օգտվել փախստականի կարգավիճակից[34]:

Ոչ այնքան մեծ, սակայն անհերքելի ազդեցություն ունեցան Հայաստանում տեղի ունեցող վերջին իրադարձությունները՝ կապված հեղափոխության գործընթացների և քաղաքացիական նախաձեռնությունների հետ: Այդ իրադարձությունները հիմնականում մեծ ազդցություն են ունեցել երիտասարդ սիրիահայերի մտադրությունների վրա, որոնք անմիջականորեն մասնակցել են և ներգրավված են եղել քաղաքացիական հասարակության մեջ: Վերջինս կապված է նաև այն տեսլականի հետ, որ սիրիահայերը Հայաստանում տեղի ունեցող քաղաքացիական նախաձեռնություններին մասնակցելուց զատ իրենց տեսնում են նաև պետական համարգերում, ղեկավար պաշտոններում, ինչը Սիրիայում գրեթե անհնար էր:

[34] Ներսիսյան Ս., Տանաջյան Լ. Հայաստան ներգաղթած սիրիահայերի ինտեգրման խնդիրները, Սիրիահայերը Հայաստանում. ինտեգրման ուղիները (պատ. խմբ. Կարապետյան Ռ., Բարսեղյան Ս.) Երևան, Գիտություն 2015, էջ 60:

Եզրակացություն և առաջարկություններ

Այսպիսով, Հայաստանի առջև ծառացած մի շարք մարտահրավերների համատեքստում մեծ հնչեղություն է ստանում ներգաղթյալների հոսքը դեպի Հայաստան: Վերջին տարիների զանգվածային ներգաղթի հոսքերը Հայաստան ակնհայտ դարձրեցին ներգաղթյալների վերաբերյալ հատուկ քաղաքականության բացթողումները:

Սիրիայում տեղի ունեցած իրադարձությունների հետևանքով Հայաստան ներգաղթեց սիրիահայերի մեծ խումբ: Վերջինս առաջ բերեց ՀՀ-ում նրանց ընդունման, տեղավորման և ինտեգրման խնդիրների համալիր, ինչը ցույց տվեց ներգաղթի քաղաքականության լրամշակման անհրաժեշտությունը:

Հայաստանում ապաստանած սիրիահայերի մի մասը հաստատվեց Հայաստանում, մի մասը վերադարձավ Սիրիա, իսկ մնացած մասն արտագաղթեց երրորդ երկիր: Մեծ քանակությամբ սիրիահայերի՝ Հայաստանում հաստատվելն առավել կարևոր դարձրեց նրանց ինտեգրման փորձառության դիտարկումը և ուսումնասիրությունը:

Հաշվի առնելով ինտեգրման քաղաքականության միջազգային փորձում ընդունված մի քանի ռազմավարություններ (ներառող և մեկուսացնող, ուղղահայաց և հորիզոնական, դինամիկ և ստատիկ, մշտահոս կամ իրադարձային), այնուամենայնիվ, կարևորում ենք ոչ թե այդ մոտեցումները կամ վերջնարդյունքը, այլ դրանց իրականացման մեխանիզմները:

Դիտարկելով Հայաստանում սիրիահայերի ինտեգրման իրական քաղաքականությունը միջազգային փորձի համատեքստում՝ կարելի է եզրակացնել, որ ՀՀ-ում սիրիահայերի նկատմամբ պետական քաղաքականությունը կրում է իրադարձային բնույթ, քանի որ ձևավորվել է պետության առջև ծառացած խնդրի լուծման հետևանքով: Հայաստանում սիրիահայերին ուղղված ծրագրերն ու միջոցառումներն, հիմնականում, առաջնային կարիքների բավարարման և կարճաժամկետ լուծումներ ապահովելու նպատակ ունեն:

Վերոնշյալն արդյունք է նրա, որ ՀՀ-ը դեռևս չի մշակել ներգաղթյալների ինտեգրման ընդհանրական մոտեցում՝ որպես պետական քաղաքականության մաս:

Հայաստանի, սփյուռքի և միջազգային հանրության կողմից սիրիահայերի ներգաղթը Հայաստան չի ընկալվում միանշանակորեն և ներկայացվում է տարբեր դիտանկյուններից: Հայաստանի կողմից այն ավելի շատ դիտարկվում է որպես հայրենադարձություն: Դա պայմանավորված է Հայաստանի ներգաղթի պատմությամբ, սփյուռքի առկայությամբ և հայրենադարձության դիսկուրսով:

Կատարված հետազոտությունը, որն ընդգրկում է Հայաստան ներգաղթած սիրիահայերի ինտեգրման փորձառությանն առնչվող խնդիրները, գալիս է ամբողջացնելու առկա ուսումնասիրությունների շրջանակը:

Ամփոփելով ուսումնասիրության արդյունքները՝ կարելի է ասել, որ ներգաղթած սիրիահայերի տարբեր խմբեր առանձնանում են իրենց խնդիրներով և դրանց հաղթահարման ձևերով:

- Բարձր տարիքային խմբի ներկայացուցիչներն ավելի շատ բարդություններ ունեն նոր միջավայրին հարմարվելու հարցում, ուստի նրանք չեն շտապում կամ չեն կարողանում ինտեգրվել, այլ նախընտրում են վերադառնալ:
- Երիտասարդներին ավելի դյուրին է ադապտացվել նոր միջավայրին. նրանք ավելի պատրաստ են կյանքի նոր փոփոխություններին ու շրջադարձերին, ինչպես նաև ավելի քիչ են կապված սեփականության հետ:
- Կանանց համար հայաստանյան միջավայրն ավելի ապահով է թվում, և նրանք ավելի անկաշկանդ են զգում իրենց՝ սկսած կանանց նկատմամբ վերաբերմունքից մինչև տնտեսական գործունեության ազատ ընտրությունը:
- Բարձրագույն կրթությամբ անձիք դժվարությամբ են կարողանում գտնել իրենց հարմար աշխատանք Հայաստանում և կարծում են, որ Սիրիայում ավելի մեծ հնարավորություններ կունենային ցանկալի աշխատանք գտնելու հարցում:
- Միջնակարգ կրթությամբ անձիք, ըստ էության, ձգտում են այլ երկրում գտնել առավել հեշտ ապրուստի միջոց և օգտվել փախստականի կարգավիճակից:

- Բևեռային՝ բարձր և ցածր սոցիալական դիրք ունեցող խմբերը հակված են հեռանալ Հայաստանից՝ վերադառնալ Սիրիա կամ գնալ այլ երկիր:

Սիրիահայերի ինտեգրման խնդիրների և դրանց հաղթահարման ուղիների վերլուծությունը ցույց տվեց, որ ՀՀ-ում ամենադժվար հաղթահարելի խնդրների համախումբը տնտեսականն է: Այն պահանջում է լուծման մի շարք քայլեր տարբեր խմբերի, կառույցների կողմից: Այս ոլորտում սիրիահայերի խնդիրները պայմանավորված են հայաստանյան փոքր շուկայի, տնտեսական համակարգի և աշխատանքային մշակույթի տարբերությունների, մասնագիտական անհամապատասխանության և այլ գործոններով:

Համեմատաբար հեշտ հաղթահարելի են սոցիալ-մշակութային խնդիրները, քանի որ խմբի ունեցած ներուժը, սոցիալական միջավայրը և կողմնակի այլ աջակցությունը նպաստավոր պայմաններ են ստեղծել: Ներգաղթած սիրիահայերն ունեն մի շարք ընդհանրություններ ընդունող հասարակության հետ (ազգություն, կրոն, մասամբ՝ լեզու), որի արդյունքում մշակութային տարբերությունները և սոցիալական ներգրավվածության խնդիրներն ի սկզբանե սուր չեն դրվել:

Այսպիսով, Հայաստանում սիրիահայերի ինտեգրումը դեռևս շարունակվող գործընթաց է, և առկա են լուծում պահանջող խնդիրներ: Սիրիահայերի դեպքը թույլ է տալիս հետևել ներգաղթի և ինտեգրման գործընթացին բոլոր փուլերում, ուստի հնարավորություն է ընձեռում մշակել համապարփակ քաղաքականության փաստաթուղթ, որը կներառի խնդիրների հաղթահարման արդյունավետ մեխանիզմներ նմանատիպ այլ դեպքերի համար ևս:

Իրականացված հետազոտության արդյունքում մշակվել են քաղաքականության մի շարք առաջարկություններ, որոնք առանձնացվել են երկու խմբով՝ ըստ ***ներգաղթի ընդհանուր*** և ***սիրիահայերի ինտեգրման*** **հատուկ քաղաքականության**:

Ներգաղթի քաղաքականության ընդհանուր առաջարկություններն ուղղված են ՀՀ ներգաղթող բոլոր խմբերին: Ենթադրվում է, որ տվյալ առաջարկությունները և քայլերը կնպաստեն ներգաղթյալների ընդունման, տեղավորման և ինտեգրման խնդիրների առավել համակարգված և արագ լուծումներ գտնելուն:

Ներգաղթի քաղաքականության առաջարկություններ

Քաղաքականության փաստաթղթի մշակմանն ուղղված առաջարկություններ.

- Առաջին հերթին պետական կառույցների կողմից պետք է մշակվի միջգերատեսչական, ինստիտուցիոնալ և համալիր մոտեցմամբ ներգաղթի քաղաքականություն: Պետությունը պետք է ունենա համընդհանուր միգրացիոն քաղաքականություն՝ ներառելով բոլոր տեսակի իրավական կարգավիճակ ունեցող ներգաղթյալներին:
- Ներգաղթյալների խմբի հանդեպ իրականացվող քաղաքականությունն անհրաժեշտ է մշակել՝ հիմնվելով հետազոտությունների վրա, որոնք կներառեն ներգաղթի բոլոր փուլերը՝ ՀՀ մուտք գործելուց մինչև ինտեգրում:

Ներգաղթյալների տեղաբաշխմանը և նրանց վերաբերյալ տվյալների հավաքագրմանն ուղղված առաջարկություններ

- Պետական մարմինների նախաձեռնությամբ պետք է մշակվի ներգաղթի գործընթացի մշտադիտարկման և արագ արձագանքման խմբի ձևավորման մեխանիզմ, որը, ըստ կոնկրետ իրավիճակի, կարող է վերահսկել ներգաղթի ընթացքը, տեղաշարժերը, հավաքագրել տեղեկատվություն, իրականացնել կարիքների գնահատում և տալ ինտեգրմանն ուղղված առաջարկներ: Այս գործընթացում պետք է ներգրավվեն համապատասխան պետական մարմինների, կառույցների ներկայացուցիչներ, հետազոտական կենտրոններ և փորձագետներ:
- Պետական մակարդակով պետք է ստեղծել ճշգրիտ տվյալների բազա՝ հետագայում կարիքների գնահատման և ինտեգրման նպատակով (օրինակ՝ ըստ նախապես սահմանված ցուցիչների՝ հավաքագրել ներգաղթյալների սոցիալ-ժողովրդագրական տվյալները ՀՀ մուտք գործելու պահին):
- Պետական կառույցների համագործակցությամբ կազմակերպել ներգաղթյալների տեղավորման և տեղաբաշխման գործընթացը: Ձևավորել հատուկ խումբ՝ կազմված սոցիալական աշխատողներից, գործակալություններից, ՏԻՄ-ից, որոնք կօժանդակեն ընդհանուր մոտեցմամբ ներգաղթյալների ինտեգրմանը: Արդյունքում կարող են մշակվել նաև մայրաքաղաքից ապակենտրոնացնող ծրագրեր դեպի մարզեր:

Ներգաղթյալներին վերաբերող ծրագրերի իրականացման ընթացքին ուղղված առաջարկություններ

- Ներգաղթյալներին ուղղված տարբեր ծրագրերը պետք է իրականացվեն պետական, հասարակական և միջազգային սեկտորների համագործակցությամբ, ինչը թույլ կտա ապահովել արդյունավետության բարձրացումն ու հասցեականությունը, ինչպես նաև խուսափել ինտեգրմանն ուղղված ծրագրերի ու հետազոտությունների անհարկի կրկնություններից (ոչ միայն ոլորտային/թեմատիկ, այլ նաև փուլային): Ինչպես օրինակ՝ առաջնային ինտեգրման խնդիրների լուծման ծրագիրը չկրկնել ներգաղթի 4-րդ տարում, կամ ՀՀ քաղաքացիություն ստացած ներգաղթյալների համար իրականացնել «Հայաստանում հաստատվելու» ինտեգրման այլ ծրագրեր:
- Պետական մակարդակով և քաղաքականության փաստաթղթում ամրագրելու միջոցով պետք է ապահովել ծրագրերի վերահսկողությունը, հաշվետվողականությունն ու թափանցիկությունը (սա հատկապես կարևոր է սփյուռքի միջհամայնքային համագործակցության, փոխօգնության, վստահության և արտակարգ իրավիճակներում մոբիլիզացման տեսանկյունից): Վստահության բարձրացման նպատակով՝ քաղաքականության մշակման և ծրագրերի իրականացման փուլում պետք է ներգրավված լինեն ներգաղթյալների խմբերի ներկայացուցիչներ:

Սիրիահայերի ինտեգրմանն ուղղված առաջարկություններ

Զեռնարկատիրության և աշխատանքային գործունեության ոլորտ

ՀՀ-ում ամենադժվար հաղթահարելի խնդրները սիրիահայերի տնտեսական ինտեգրման խնդիրներն են: Այս նպատակով՝

- Տնտեսական զարգացման և ներդրումների, սփյուռքի նախարարությունների կողմից, ինչպես նաև ՓՄՁ համակարգող կենտրոնների ու ՀԿ-ների կողմից կարող է մշակվել «սիրիահայկական բրենդ», որը կկիրառվի սիրիահայերի կողմից արտադրած ցանկացած

ապրանքի կամ ծառայության համար և կունենա հատուկ հարկային, եկամտային քաղաքականություն:

- Անհրաժեշտ է ստեղծել կազմակերպություն (ՀԿ կամ պետական կառույցին կից), որը կուղղորդի Հայաստանում ձեռնարկատիրություն սկսող սիրիահայերին. կապահովի անհրաժեշտ խորհրդատվությամբ շուկայի ծավալների, տնտեսական համակարգի, բիզնեսվարման մշակույթի, ֆինանսական արդյունավետ պլանավորման, հարկային, մաքսային օրենսդրությանը վերաբերող հարցերի մասին:
- Պետական մարմինների կողմից մասնավոր սեկտորի հետ համագործակցությամբ տարածքներ տրամադրել ինքնազբաղված կամ փոքր ձեռներեցությամբ զբաղվող անհատների կամ ոչ մեծ խմբերի՝ ձեռնարկատիրական գործունեություն սկսելու համար:
- Աշխատանքային գործունեություն ծավալել ցանկացող սիրիահայերին գործատուների կամ վերապատրաստողների կողմից պետք է տրամադրվի հատուկ ձևաչափով փաստաթուղթ, որը կծառայի որպես բնութագիր և կհաստատի վարպետության դասերի, փորձաշրջանի, փորձի փոխանակման դասընթացների մասնակցությունը, ստացած որակավորման աստիճանը, ինչը հետագայում կարող է օգտագործվել նոր աշխատավայր դիմելիս:
- Գործատուների, վերապատրաստողների, պետական մարմինների կողմից ստեղծել վերապատրաստման կամ վերապրոֆիլավորման երկաստիճան համակարգ. դասընթացներ անցկացնել առավել լավ պատրաստված մի խումբ սիրիահայերի հետ, ովքեր իրենց հերթին կվերապատրաստեն ավելի մեծ քանակի անձանց, այդպիսով ապահովելով փորձի փոխանակություն և սոցիալական ներառվածության ցանցային մեխանիզմ:
- ՓՄՁ կենտրոնների և ՀԿ-ների կողմից կարող են ստեղծվել բազմապրոֆիլ կամավորական, ստեղծարար կամ ստարտափ աշխատանքային խմբեր՝ ներառելով և՛ հայաստանցիների, և՛ սիրիահայերի:

- Համահայկական հիմնադրամների միջոցով ներդրումային ծրագրերի մեջ որպես աշխատուժ ընդգրկել սիրիահայերին:

Կրթական ոլորտ

- Սիրիահայերի համար կրթության ոլորտում առկա համակարգային տարբերությունների հաղթահարման և ստացած որակավորումը Հայաստանի չափանիշներին համապատասխանեցնելու նպատակով անհրաժեշտ է կազմակերպել իրազեկման դասընթացներ ԿԳՆ-ի և համապատասխան ՀԿ-ների կողմից:
- ԿԳՆ և այլ կառույցների համակարգմամբ առանձին թիրախավորված խմբերին ուղղորդել ԲՈՒՀ-եր ըստ մասնագիտությունների, որտեղ ամբիոններին կից՝ ձևավորված աշխատանքային խմբերը կիրականացնեն աշխատանքներ՝ իրազեկելով համապատասխան մասնագիտություններում նրանց ներառման հնարավորությունները և անհրաժեշտ պայմանները:
- ԿԳՆ կողմից հանրակրթության ոլորտում մի շարք ծրագրերի ներդրումը թույլ կտա լուծել երեխաների ինտեգրման խնդիրները, օրինակ՝ կազմակերպել լրացուցիչ պարապմունքներ երեխաների և հատուկ խորհրդատվություն ծնողների հետ՝ կրթական համակարգի վերաբերյալ իրազեկման նպատակով:
- Լեզվական խնդիրների հաղթահարումը կրթական համակարգում դիտարկել զուգահեռաբար երկու տեսանկյունից. 1) ԲՈՒՀ-երում արևմտահայերենի ուսուցիչների պատրաստում (ներառելով նաև սիրիահայերի), 2) արևելահայերենի դասընթացների կազմակերպում սիրիահայ սովորողների համար:

Սոցիալ-մշակութային ոլորտ

Չնայած այն հանգամանքին, որ սոցիալ-մշակութային խնդիրները համեմատաբար հեշտ հաղթահարելի են, այդուհանդերձ ինտեգրման համատեքստում անհրաժեշտություն կա մշակել այս ոլորտում նրանց ներգրավվածությանը նպաստող ծրագրեր՝ միջավայրային առանձնահատկությունների յուրացման, սոցիալական առաջընթացի և ինքնաիրացման նպատակով:

- Առաջարկվում է սիրիահայ և հայաստանցի տարբեր խմբերի միջև ապահովել մշակութային երկխոսություն, փորձի փոխանակում՝ սկսած մասնագիտական հմտություններից մինչև առօրյա կենցաղային ավանդույթները: Որպես

օրինակ, պետական կառույցների և ՀԿ-ների համագործակցությամբ կազմակերպել փառատոններ, մշակութային օրեր և այլն, որոնք, ըստ նախկին փորձի չեն ներառի միայն սիրիահայերին, այլ, ընդգրկելով հայաստանցիներին, կնպաստեն ոչ միայն սիրիահայերի այս կամ այն խնդիրների լուծմանը, այլև հայաստանցիների հետ երկխոսությանն ու հայաստանյան միջավայրում նրանց ներառմանը:

- Օգտվելով պետական կառույցների կողմից Հայաստանում բնակվող սիրիահայերի մասին արդեն իսկ հավաքագրված տվյալների դարանից, ըստ կարիքների՝ իրականացնել տարբեր մասնագիտական խմբերի փորձի փոխանակման ծրագրեր: Պետական կառույցների ուղղորդմամբ կարելի է ներգրավել տարբեր մասնավոր և հասարակական կազմակերպություններ, գործարարներ, անհատներ և այլն:
- Պետական կառույցների և ՀԿ-ների նախաձեռնությամբ տարբեր սեռա-տարիքային խմբերի համար մշակել հատուկ ծրագրեր՝ ծանոթությունների հարթակ ստեղծելու, սոցիալ-մշակութային դաշտին ծանոթացնելու համար: Որպես օրինակ, կարող են լինել երիտասարդների համար կազմակերպվող թեմատիկ ուղղվածության ճամբարները կամ հավաքույթները (ճանաչողական, ուսուցանող, սպորտային, խաղային և այլն)՝ հայաստանցիների և սիրիահայերի ներգրավմամբ:
- Հաշվի առնելով սիրիահայերի ինքնակազմակերպական և համայնքային կյանքի փորձառությունը՝ հասարակական կյանքում նրանց ներառումը իրականացնել ՀԿ-ներում: Պետք է համագործակցություն լինի սիրիահայերի կողմից ստեղծված կամ նրանց հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների և հայաստանյան այլ ՀԿ-ների միջև: Ենթադրվում է, որ այդ համագործակցության արդյունքում սիրիահայերին կուղղորդեն տվյալ խնդրով զբաղվող համապատասխան ՀԿ-ներ (օրինակ, մարդու իրավունքների, շահերի պաշտպանության, իրավական, առողջապահական, կրթական և այլ հարցերով զբաղվող):
- Տարբեր պետական և միջազգային կառույցների, ՀԿ-ների կողմից/կամ համագործակցությամբ սահմանել գիտական, հետազոտական կամ այլ տեսակի դրամաշնորհներ, որոնց համար պարտադիր պայման կլինի

սիրիահայերի և հայաստանցիների համագործակցային մասնակցությունը: Դրամաշնորհներն ուղղված կլինեն տարբեր ոլորտներում սիրիահայերի ներգրավմանը նպաստող վերջնարդյունքների՝ հանդիպումների կազմակերպում, խնդիրների ներկայացում, համատեղ քննարկումներ և այլն:

- ՋԼՄ-ի, մշակութային և կրթական միջավայրերի միջոցով Հայաստանում առկա տեղեկատվական դաշտում նպաստել սիրիահայերի ներկայացվածությանը՝ ապահովելով հասարակության հետ չմիջնորդավորված հաղորդակցման հնարավորությունը: Որպես օրինակ՝ կարելի է հայաստանցի և սիրիահայ լրագրողների համագործակցությամբ ստեղծել լրատվական ծառայություն, որտեղ կլուսաբանվեն թե՛ սիրիահայերին ու Սիրիայում հայկական համայնքին վերաբերող, թե՛ հայաստանյան իրադարձությունները: Կամ բարձր ռեյտինգային հեռուստատեսությամբ ներկայացնել հաղորդաշար սիրիահայերի մասնակցությամբ՝ նվիրված նրանց առօրյային, խոհանոցին, ավանդույթներին կամ պատմությանը:

Օգտագործված գրականության և աղբյուրների ցանկ

1. Bauböck R. Transnational Citizenship: Membership and Rights in International Migration. Aldershot Eng.: Edward Elgar, 1994.
2. Brubaker R. Immigration and Policies of Citizenship in Europe and North America, Lanham Md. University Press of America, 1989.
3. Berry J. W., Sam D.L. Acculturation and Adaptation, Boston, 1997.
4. Favell A. Integration Policy and Integration Research in Europe: a Review and Critique // Citizenship Today: Global Perspectives and Practices /T.A. Aleinikoff, D. Klusmeyer (eds.). Washington, D.C.: Brookings Institution / Carnegie Endowment for International Peace, 2001:
5. Hammar T. European Immigration Policy: A Comparative Study, New York, Cambridge University Press, 1985.
6. Heidenheimer A. Heclo H., Adams C. Comparative Public Policy: The Politics Politics of Social Choice in America, Europe and Japan. New York: St. Martin Press, 1990.
7. Heclo H. Review Article: Policy Analysis // British Journal of Political Science, Vol. 2, 1972.
8. Kymlicka W. Multicultural Citizenship: A Liberal Theory of Minority Rights, Oxford, 1995:
9. Kaufmann F. The Relationship between Guidance, Control, and Evaluation // The Public Sector – Challenge for Coordination and Learning / Ed. by Kaufman F.-X. Berlin, New York: Walter de Gruyter, 1991.
10. Morrison T. Actionable Learning. A Handbook for Capacity Building Through Case Based Learning, Tokyo: Asian Development Bank Institute, 2002.
11. Miles R., Thränhardt T. Migration and European Integration: The Dynamics of Inclusion and Exclusion, 1995.
12. Mihaela R. Refugees and Social Integration in Europe, United Nations Department of Economic and Social Affairs (UNDESA), Division for Social Policy and Development, United Nations Expert Group Meeting, New York, 2018.
13. Political Dimensions, Edited by Miroslav Macura, Alphonse L. MacDonald and Werner Haug, The New Demographic Regime Population Challenges and Policy Responses, New York and Geneva, 2005.
14. Penninx R. Integration of Migrants. Economic, Social, Cultural and Political Dimensions, https://pdfs.semanticscholar.org/fbd9/7226e0ccb1cf5d30ac146042289a29c29286.pdf.
15. Soysal Y. Limits of Citizenship: Migrants and Postnational Membership In Europe, Chicago: University of Chicago, 1994.
16. Snel E., Engbersen G., and Leerkes. A. Transnational involvement and social integration. Global Networks, 6 (3), 2006.

17. Sharkansky I. Public Administration. Policy-Making in Government Agencies. Chicago: Markham Publishing Company, 1982.
18. Stein H. Presidential Economics. New York: Simon and Schuster, 1984.
19. Valtonen, M.K. Social Work and Migration: Immigrant and Refugee Settlement and Integration. Routledge, 2008.
20. Государственная политика и управление: учебник: в 2 ч. /под ред. Л. В. Сморгунова. Ч. 1: Концепции и проблемы государственной политики и управления. М., 2006.
21. Интеграция мигрантов возможна ли она в современном обществе? Научная серия «Международная миграция населения: Россия и современный мир» Выпуск 29, 2015.
22. Пашаян А., Армянская община Ирака: новые вызовы/ http://www.noravank.am/rus/issues/detail.php?ELEMENT_ID=3061.
23. Рязанцев С. В. Трудовая миграция в странах СНГ и Балтии: тенденции, последствия, регулирование. М.: Формула права, 2007.
24. Ходжабекян В., Асатрян Б. Демографические аспекты урбанизации в Армянской ССР, Ереван: 1990.
25. Южанин М. А., о социокультурной адаптации в иноэтнической среде: концептуальные подходы к анализу, Социологические исследования, № 5, 2007.
26. Գևորգյան Լ. Սփյուռքահայության ներգաղթի իրավական կարգավորման խնդիրը: ՎԷՄ համահայկական հանդես, Երևան, N 4/44, 2013:
27. Հակոբյան Ա. Սիրիահայերը հայաստանում. հայրենադարձներ, թե՞ փախստականներ (իրավական, մշակութային ու սոցիալական ադապտացման հիմնախնդիրներ), Բաց Հասարակություն Հիմնադրամներ_Հայաստան, 2017:
28. Հակոբյան Գ. Հայաստանում բնակվող սիրիահայ ընտանիքների էթնոմշակութային առանձնահատկությունները/ Արդի հայ ընտանիքը փոխակերպվող հասարակությունում, Երևան 2017:
29. Մելիքսեթյան Հ. Ու. Արևմտահայերի բռնագաղթը և սփյուռքահայերի հայրենադարձությունը, Սովետական Հայաստան, Երևան, ԵՊՀ, 1975:
30. «Հայրենադարձության փորձը ու ինտեգրումը Հայաստանում. խոչընդոտները և հնարավորությունները», Երևան 2015:
31. Կարապետյան Ռ. Սիրիահայերը Հայաստանում. ադապտացման և ինտեգրման խնդիրները, ուսումնասիրության նպատակները, մեթոդաբանությունը և հեռանկարները, Սիրիահայերը Հայաստանում. ինտեգրման ուղիները, (պատ. խմբ.՝ Կարապետյան Ռ., Բարսեղյան Ս.) Երևան, Գիտություն 2015:
32. Ներսիսյան Ս., Տանաջյան Լ. Հայաստան ներգաղթած սիրիահայերի ինտեգրման խնդիրները, Սիրիահայերը Հայաստանում. ինտեգրման ուղիները, պատ. (խմբ.՝ Կարապետյան Ռ., Բարսեղյան Ս.) Երևան, Գիտություն 2015::
33. Ներսիսյան Ս., Տանաջյան Լ. Սփյուռքահայերի ներդրումային գործունեությունը Հայաստանում, Գլոբուս, թիվ 10 (89), Երևան, 2017:

34. https://www.economist.com/graphic-detail/2015/09/10/where-syrians-find-their-refuge/Where Syrians find their refuge
35. http://www.mindiaspora.am/am/petakan_qaxaqakanutyun
36. http://www.edrc.am/images/Useful_Publications/aer_2016_eng.pdf/ Հայաստանի տնտեսական զեկույց 2016թ., սիրիահայերի տնտեսական ինտեգրումը հայաստանում
37. http://olp.advocates.am/pluginfile.php/1397/mod_resource/content/Հայաստանում տեղահանված անձանց աջակցման ծառայությունների տեղեկատվական թերթիկ
38. https://eriwan.diplo.de/blob/1272548/6248f493038de3b6b53048e2776cd5b0/ez-broschuere-data.pdf/ Գերմանիայի Դաշնային Հանրապետության ծրագրերը Հայաստանում
39. http://www.mindiaspora.am/res/Hashvetvutyunnner/2017/tarekan/Geraka_2017.pdf/ Տեղեկանք Հայաստանի Հանրապետության կառավարության 2017թ. հունվարի 12-ի N 122-Ն որոշման N 2 հավելվածի 120-125 կետերով սահմանված գերակա խնդրի կատարման արդյունքների մասին
40. https://www.e-draft.am/projects/679/about
41. https://www.hrw.org/world-report/2017/country-chapters/syria
42. https://www.opendemocracy.net/od-russia/mikayel-zolyan/refugees-or-repatriates-syrian-armenians-return-to-armenia / Refugees or repatriates? Syrian Armenians return to Armeni Mikayel Zolyan, 15 October 2015